


Շնորհակալություն հայ ժողովրդին

«Ազնավուր» հիմնադրամը տարածել է Շառլ Ազնավուրի բաց նամակը.

«Հայաստանում գտնվող իմ շատ սիրելի քույրեր եւ եղբայրներ,

Շնորհավորում եմ ձեզ, որ կարողացաք առանց արյան, բռնության, արժեքների ունահարման անցում ապահովել երկրում մեկ այլ իրողության: Քաղաքացիական անհնազանդության օրերին եւս դրսևորեցիք արժանապատիվ ու մարդասիրական կեցվածք՝ լուծում առաջարկելով ծագող խնդիրներին այնքան սահուն ու արագ, ասես դա դյուրին էր: Սա զարմացրեց եւ մտածելու տեղիք տվեց շատ այլ երկրների կառավարություններին:

Մեզ սիրյալների հայերիս համար մեծ հպարտություն էր ցույց տալ աշխարհին, որ կա մի փոքր երկիր, որի քաղաքացիները բացառիկ իմաստություն եւ մարդասիրություն դրսևորեցին ապացուցելով, որ բռնությունը խաղաղության եւ փոխըմբռնման տանող ճանապարհի չի կարող լինել: Մեր պատմության ընթացքում շատ դժվարություններ ենք ճանաչել: Հիմա բացում ենք երջանկության, իմաստության եւ սիրո էջը:



Ձեզ հաջողվեց ապացուցել, որ մեր ազգի ունի գիտակցության բարձր աստիճան, եւ որ մեր երկրի համար առաջնահերթ է ու միշտ էլ պետք է առաջնահերթ մնա ամենակարեւորը՝ միավորումը: Այս միավորումն է, որ թույլ է տալու ապահովել երկրի բարեկեցությունը եւ քաղաքացիների միջեւ բարյացակամ վերաբերմունքը: Ձեզ հաջողվեց ապացուցել, որ հնարավոր է ապրել միավորված եւ պատասխանատվության բարձր զգացումով:

Մենք՝ հայերս, կարողացանք ցույց տալ, որ «ժողովուրդ», «հայրենիք», «դրոշմ», «մշակույթ», «կրոն» եւ «ընտանիք» բառերը մեր արժեքներն են: Եվ որ յուրաքանչյուր հայ իր երկրում ունի հավասար իրավունքներ ու ազատություններ:

Ես, հավանաբար, աշխարհի հայերից ամենաֆրանսիացին եմ, սակայն ես հպարտ եմ իմ Հայաստանով եւ երբեք չեմ թաքցրել դա:

Շնորհակալություն հայ ժողովրդին աշխարհին մեր մարդասիրությունը ցույց տալու համար. Հայաստանը մեծ է իր արժեքներով: Օրինակ լինենք բոլոր նրանց համար, ովքեր տարբեր են, զուցե նաեւ ոչ այնքան բաց փոփոխությունների առջեւ: Եկեք առաջ ընթանանք նույն ճանապարհով: Վստահ եմ այն լավագույնն է մեր ազգի եւ ժողովրդի ապագայի համար:

Շնորհակալ եմ յուրաքանչյուրիդ հպարտության այս մեծ զգացումն ինձ պարգևելու համար:

Կեցցե Հայաստանի Հանրապետությունը, – գրել է Ազնավուրը:

Ես եկել եմ խոնարհվելու երիտասարդության հավատի և արժանապատվության առաջ

Օպերային երգչուհի Հասմիկ Պապյանն այսօր լրագրողների հետ հանդիպման ընթացքում խոսեց Հայաստանի վերջին շաբաթների ներքաղաքական իրավիճակի մասին, ինչպես նաև անդրադարձավ սպասվող փոփոխություններին:

«Ես ասուլիսին եկել եմ ոտքով և ամբողջ ճանապարհին տեսել այն խանդավառությունը, միասնությունն ու համախմբվածությունը, որ վերջին շաբաթներին տիրում է մեր ողջ երկրում: Միտքով լցված այսպիսի հեղափոխություն դժվար թե այլևս որևէ տեղում տեսնես: Ես Հայաստան եմ եկել երեք օրով, թողեցի բոլոր գործերս ու պայմանավորվածություններս ու աղջկաս հետ եկա, որպեսզի խոնարհվեմ այն երիտասարդների առաջ, ովքեր քայլ արեցին, և այդ քայլը դարձավ հեղափոխություն: Ես եկել եմ խոնարհվելու նրանց հավատի և արժանապատվության առաջ: Եկա նաև այս ամենն իմ աչքերով տեսնելու և զգայարաններով զգալու, որպեսզի տարիներ անց թոռնիկներիս պատմելու բան ունենամ»:

Անդրադառնալով երեկ Ազգային ժողովում գումարված հատուկ նիստի և դրա արդյունքների թեմային, օպերային երգչուհին նկատում է ամենամասնադատելի ու սոսկալի թատերական ներկայացումն էր տրագիկոմեդիայի ժանրում, որտեղ դեռ հայտնի չէ կոմեդիան և էր գերակշռում, թե ողբերգությունը. «Այդ մարդկանց տեսնելով՝ ամենամեծ ցավն էի ապրում, որ այսօր 21-րդ դարում, Ազգային ժողովում հավաքված տիկնայք և պարոնայք կարող են ապրել դեռ միջնադարում: Առաջին



լուրջ բարեփոխումը, որ պետք է կատարվի հեղափոխությունից հետո, այն է, որ այս մարդկանց և նրանց հովանավորներին պետք է հեռացնել, ովքեր տարիներ շարունակ արդեն փաստել են իրենց անգործությունն ու գնաճակարկությունը մեր երկրին»:

Առաջնահերթ խնդիրների շարքում Հասմիկ Պապյանն ընդգծում է նաև երկրում արդարադատության համակարգի վերականգնումը:

«Այսպիսի դատարաններով և այսօրինակ խայտառակ դատական համակարգով մեր երկիրը չի կարող առաջ գնալ և համընթաց քայլել աշխարհի հետ: Առհասարակ, չկա մի

այնպիսի ոլորտ, որի առողջացումն ու բարեփոխումը կարողանանք ստորադասել մյուսներից: Այս ողջ տարիների ընթացքում մեր երկիրն էականորեն լուրջ գնահատել է կրել բոլոր ոլորտներում և բոլոր առումներով»:

Անդրադառնալով մշակութային ոլորտում սպասվելիք բարեփոխումների թեմային, օպերային երգչուհին առանձնացնում է.

«Շատ կարևոր խնդիրներից է ժողովրդին վերադարձնել դեպի իր մշակույթը: Մենք չպետք է թույլ տանք, որ մանկապարտեզի երաժշտական հանդեսներ վարած մարդիկ իրենց ձեռքը վերցնեն մեր մշակույթը և պարտադրեն առավել արժանավորներին իրենց շողորդությունը և քծնել իրենց տալով նրանց կոչումներ, պարգևներ և մեդալներ և այլն: Մենք մեր ժողովրդին պետք է վերադարձնենք իր կորցրած հպարտությունը»:

Հասմիկ Պապյանի գնահատմամբ՝ այն, ինչ կատարվեց մեր երկրում վերջին ամսվա ընթացքում, նաև մշակութային հեղափոխություն էր. «Հետևաբար, ինչպիսին էլ որ լինի այս ճշմարիտ և արդար ճանապարհի ընթացքը, որ ընտրել են մեր երկրի երիտասարդները՝ իրենց արժանապատվությունը վերադարձնելու՝ ճանապարհին, այս շարժվող գնացքն արդեն կանգնեցնել հնարավոր չէ: Բնարկե, շատ կարևոր է, թե ինչպիսին կլինի նոր վարչապետի թիմն ու իր շրջապատը, որովհետև դրանից շատ բան է կախված: Այլքը եկավ ու սրբեց տարավ հինը, իմիս պետք է գտվի իր շուրջն ու շրջապատը»:

Նվարդ ՄԱՆՎԵԼՅԱՆ

«Տերերի ու որբերի ժամանակը». ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Վերջին օրերին բազմաթիվ անգամներ ու տարբեր առիթներով հիշեցվեց «Հայթա-նակները հազար ու մի տեր ունեն, պարտությունները որբ են» արտահայտությունը:

Հիշեցվեց հեղափոխությունների տրամաբանության ենթատեքստում:

Մակայն Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական հզոր, անբեկանելի ընդվզումը, թավշյա, խաղաղ, առանց բռնությունների, բաց ձեռքերի, սիրո, համերաշխության, հանդուրժողականության հեղափոխությունը ի թիվս բազում անհավատալի փոփոխությունների, զարմանալիորեն բացառիկ կերպով փոխեց նաև այս արտահայտության գոյության իմաստը:

Հայաստանում հաղթանակը ոչ միայն հազար ու մի տեր չունեցավ և չունի, այլև, իր այդ հաղթանակը կերտած անհատի համոզված խոստովանությամբ, այդ հաղթանակի տերը նույնիսկ այն կերտած անհատը Նիկոլ Փաշինյանը չէ: Այդ հաղթանակի տերը Հայաստանի հպարտ ու արժանապատիվ քաղաքացին է այլևս:

Փոխվեց նաև պարտության ու որբության կառուցվածքը: Պարտությունը ոչ միայն որբ չմաց, այլև առնվազն 56 մարդ աներկբա-յորեն իրեն հայտարարեց այդ պարտության ու որբության իրական տերը:

Իսկ ի նշ կատարվեց, ինչու և այդպես եղավ: Այս հարցադրումներին մոտենալու համար նախ փորձենք հասկանալ, թե ի նշ արեց Նիկոլ Փաշինյանը:

Ա. Նիկոլ Փաշինյանը մեկընդմիջ փոխեց Հայաստանում քաղաքական պայքարի խորհրդանշանային համակարգը (սիմվոլիկա):

Հրաժարվելով Ազատության հրապարակից, նա փակեց մինչ այսօր Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունների, ընդվզումների, պայքարների, շարժումների էջերը անկախ այն հանգամանքից, թե դրանք որքանով են իդենտիֆիկացվում զարթոնքի կամ նահանջի, հաղթանակի կամ պարտության, այս կամ այն սերնդի կամ անհատի կյանքի գործի հետ: Նա մեզինքն յուրաքանչյուրին իրավունք վերապահեց մնալ իր հիշողությունների, իր ունեցած զգացողությունների, իր երջանկությունների կամ դժբախտությունների, իր կյանքի պատմության հետ, բայց թողեց դրանք անցյալում ու ներկայում, բոլորիս ներկան սկսեց նոր էջից:

Բ. Նիկոլ Փաշինյանը փոխեց Հայաստանում քաղաքական պայքարի **վիզուալիզացիան (ակնադիտական կերպը):**

Ուզենք, թե չուզենք, այլևս չկան թատերական, ապա ազատության հրապարակի

հարթակում նույնատիպ կանգնած գործիչներ, մեկտեղված, բռնկված ձեռքեր, սկիզբ ու վերջ ազդարարող կոնստանտ երաժշտություններ, նախապես պատրաստված պաստառներ, պարտադրված կարգախոսներ, ստատիկ առաջնորդներ, նրանց համար բացվող միջանցքներ և այլն:

Չկա անգամ մոգական հարթակը:

Այսօր երկրի յուրաքանչյուր անկյունում են ծնվում կարգախոսներ ու վանկարկուհներ, երգեր ու ակցիաներ, գործողություններ ու մեմեր, անեկդոտներ ու պատմություններ, առաջնորդներ ու ուղղորդողներ: Ինքնատիպ են, կամ ոչ, ուժեղ են, կամ թույլ, առավել ազդեցիկ են, կամ՝ նվազ, ոչ մեկի որոշելիքը չէ այլևս: Կա մի անփոխելի ընդհանրություն ամեն ինչ ծնվում է մեկ առանձին քաղաքացու, մեկ առանձին անհատի մոտ, կողմից, ու դառնալով կամ չդառնալով հանրայնորեն ընդունելի, վաստակում է իր ապրելու կամ մեռնելու իրավունքը:

Այլևս Հանրապետության հրապարակն է քաղաքական պայքարի վիզուալիզացիայի կենտրոնը. հրապարակ, որը նաև Հայաստանի, երկրի, պետության կենտրոնն է, թվացյալորեն միշտ անմատչելի, միշտ անառիկ: Եվ այլևս հաղթահարված է նաև որևէ բանի անմատչելիության սինդրոմը: Չգիտեմ, պատահական է ը արդյոք մեկնարկը Ֆրանսիայի հրապարակից, որով հետևեց Ֆրանսիան իդենտիֆիկացվում է Բաստիլ գրավելու փաստի հետ, բայց կարևոր չէ: Գարևորը, որ Հանրապետության հրապարակն է այլևս ուղղորդող, ուղեղային կենտրոնը:

Գ. Նիկոլ Փաշինյանը փոխեց Հայաստանում քաղաքական պայքարի **հռետորաբանությունը:**

Ի նշ է ասել Նիկոլ Փաշինյանը բոլոր այս օրերի ընթացքում: Ըստ էության ոչ մի էական բան: Բայց Նիկոլ Փաշինյանն ասել է ամենաեականը. ասել է Հայաստանի հպարտ ու արժանապատիվ քաղաքացի, ասել է դու ես քո երկրի տերը, ասել է հավատա միայն ու միայն քեզ, ասել է դու ես իշխանությունը, դու ես որոշողը, դու ես վճիռ կայացնողը: Ասել է մերժիր, մերժիր Մերժին, մերժիր ցանկացած բան, ինչք քեզ կաշկանդում է, քեզ ստրկացնում է, քեզ նսեմացնում է, խոցում է քո արժանապատվությունը, քաղաքացու քո արժանապատվությունը: Ասել է դարձիր քաղաքացի:

Եվ որ առավել կարևոր է՝ Նիկոլ Փաշինյանը սա ասել է միշտ, միշտ այս գաղափարաբանությունն է եղել դրված նրա բոլոր քաղաքական ու քաղաքացիական նախաձեռնությունների հիմքում. «Իմպիչմենտ»,

«1+1», «մի մարդ կարող է փոխել և այդ մի մարդը դու ես» և այլն: Այստեղից էլ հավատը: «...Ես քաղաքական շարժումներին չեմ հավատում, ես հավատում եմ անձնական շարժմանը, հոգու շարժմանը, երբ մարդն ինքն իրեն նայելով կամայի այնքան, որ կփորձի որևէ փոփոխություն ձեռնարկել...»:

Սա ասել է Իոսիֆ Բրոդսկին:

Նիկոլ Փաշինյանը հետևողականորեն, անդադրում կրկնել ու կրկնում է հավատա ինքը քեզ, մի, հավատա քաղաքական գործիչներին, մի ապավինիր նրան հավատալուն, այլ հավատա քեզ, քո ուժին, քո արժանապատվությանը, քո հպարտությանը:

Նիկոլ Փաշինյանն այս ընթացքում չի խոսել երկիրը թալանողների, թալանածների, ժողովրդի արյունը ծծողների, Լարաբաղը ծախողների, մոնղոլ-թաթարների, թուրք-սելջուկների, քաղաքական պոռնիկների մասին: Չի խոսել նաև հոգևոր հայրենիքի, ազատ, անկախ միացյալ Հայաստանի, մեր թշնամիների ծնկի բերելու, Լարաբաղը վերադարձնելու, Մուշն ու Սասունը ետ բերելու, մեր նախնիների, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի մասին: Մի հռետորաբանություն, որը դոմինանտ է եղել Հայաստանի երեսնամյա քաղաքական պայքարում:

Եվ ընդհանրապես՝ նա չի արել հռետորաբանական որևէ, նույնիսկ աննշան սխալ: Այստեղից էլ դաս քաղելու նրա կարողությունը:

Դ. Նիկոլ Փաշինյանը փոխեց Հայաստանյան քաղաքական պայքարում **ժամանակի զգացողության ընկալումը:**

Նա միտքվեց այսօրվա թվային, տեխնոլոգիական ժամանակի մեջ, խորապես ըմբռնեց, ճանաչեց այդ ժամանակի իրական, հիմնական ու անդավաճան կրողին՝ երիտասարդությանը ու չդավաճանեց նրան, նրա ընկալումներին, պահանջներին, պահանջմունքներին, նրա կենսակերպին, կյանքին ու իրականությանը նայելու նրա հայացքին:

Նիկոլ Փաշինյանը չփորձեց նրանց տանել դեպի անցյալ, այլ նրանց հետ խրվեց նրանց իսկ ժամանակի մեջ, դարձավ նրանցից մեկը: Նույնիսկ երգ գրեց նրանց համար՝ նրանց լեզվով, հանգով, ռիթմով: «Վերցրեց» նրանց ուսապարկը, սեփիի ձողը, քայլաչափն ու քայլը:

Նրանք, ովքեր դավադրության տեսությունների սիրահարներ են, ովքեր գիտելիքների իրենց պաշարը ցուցանելու համար տալիս են Շարպի ու այլոց անունները, խոսում են

40

քայլերուց, քայլերուց, քայլերուց, խոսում են գունավոր հեղափոխություններից, չեն ընկալում, որ սա ուղղակի, ուղղակի եռագույն հեղափոխություն էր երգ ու պարով, խորովածով, շերեփով, սիգնալով, ծափով: Եռագույն ու դուխով հեղափոխություն: Այսքան եռագույն երբեք չէր ծածանվել Հայաստանում: Հայաստանում երբեք եռագույնի այսպիսի պաշտամունք չէր եղել:

Զարուհյակեն և անցնեն Հանրապետականին. իսկ ի նչ արեց Հանրապետականը:

Ա. Առաջինը և ամենագիտավորը: Անցած տասը և ավելի տարիներին մինչև վերջ, մինչև հասարակությանը անվերապահ կապիտուլյացիայի տանելու աստիճան **մշակութազրկեց** Հայաստանն ու Հայաստանի քաղաքացուն:

Այո, մշակութազրկեց: Ամենատարբեր պատրվակներով, միջոցների մեջ խտրականություն չդնելով, պահպանելի կեղծ գաղափարախոսությամբ համաշխարհային մշակույթի մեջ քաղաքակրթական լրջագույն ներդրում ունեցած ժողովրդի սերունդներին դրեց ամենապրիմիտիվ, հավաքականորեն, խորհրդանշորեն ասված «կա-վէ-էն»-ային «մշակույթի» ծանր մամլիչի տակ, որը նույնիսկ որպես ենթամշակույթ դժվար է դիտարկել:

Պետականորեն որդեգրեց միջոցառումային մշակույթի բովետական ամենահետին ավանդույթները՝ պատենշ դառնալով հա-

մաշխարհային մշակույթում հայ ժողովրդի քաղաքակրթական ներդրում անելու առաքելության շարունակականության համար:

Մշակույթի իրական կապիտալիզացիան շփոթեց ավելի շատ տոմս վաճառելու հնարքի հետ, չբնորոշելով, որ հայ մշակույթի իրական կապիտալիզացիան կարող է դրվել Հայաստանի տնտեսական զարգացման հիմքում:

Եվ ոչ մի խորքային, համակարգային մշակութային փոփոխություն: Ոչ մի:

Ավելին «կա-վէ-էն»-ային մշակույթի ամենաանհաջող, բայց հավատալի կրողներին ներմուծեց նաև քաղաքական կյանք, քաղաքական ինստիտուտներ, պետական կառավարման համակարգ: Ասել է թե ինստիտուցիոնալացրեց Հայաստանի տոտալ մշակութազրկումը:

Բ. Ոչ մի իրական փորձ չարեց՝ ճանաչել սեփական ժողովրդին իր խորքային բնութագրերով, արժեքային համակարգով, քաղաքակրթական հիմքով, խոհափիլիսոփայական ատաղձով: Եվ ստեղծեց **զուգահեռ իրականությունների Հայաստան:**

Մի Հայաստան լաբայատ, գլամուրային «մշակույթով», երեսպաշտ վերնախավով վերևի ու խավի իսպառ բացակայությամբ, կեղծ գաղափարախոսական շղարշով խոսքի ու գործի անհամաչափությամբ, ֆեյքային, նոստրադամուսային, գյուլնագոտատային վերլուծաբանների, քաղաքագետների, քաղտեխնոլոգների, տարատեսակ փորձագետների (բաներ, որ կամ գոյություն չունեն աշխարհում, կամ խիստ գիտական են) դի-

վիզիաներով՝ պատրաստ ամեն գնով կամ կոնկրետ գնի դիմաց մանիպուլացնելու հասարակությունը, քաղաքական, տնտեսական իրողությունները, ստեղծելու կեղծ օրակարգեր և հասարակությանը կցելու այդ կեղծ օրակարգերին:

Կգնան ն այդ «գիգանտները» զբաղվելու իրենց բուն մասնագիտություններով՝ հաշվապահությամբ, գյուղատնտեսությամբ, նույնիսկ լրագրությամբ, թե կշարունակեն ծառայել նոր իրողություններին: Դժվար է ասել: Կախված է հեղափոխությամբ փրկված Հայաստանի նոր իշխողների կամքից:

Պարզ հանգավորողով փոխարինեց հայ բանաստեղծին, գրողին, անհասկանալի ձայներ արտաբերողով՝ հայ երգչին, երկու ակորդի վարժ տիրապետողով՝ հայ կոմպոզիտորին, պարզ կապիտալով՝ հայ արտիստին ու այսպես շարունակ... ու արդյունքում՝ անսեռ, անգաղափար, հայկականությանն ու հայի ինքնությանն անհաղորդ մի զանգված «ամենակենսունակը տարածաշրջանում», հայ մշակույթը փոխարինեց փակղմմշակույթով՝ հիմքում դնելով իր պատկերացումներն ու կերպը, արժեքային իր համակարգը, իմացաբանական իր շերտերը, մշակույթի ճշմարիտ կրողներին վտարելով լուսանցք...

Իսկ մյուս գուզահեռ Հայաստանում մնաց այն գյուղը, որը դեռևս ապրում է 18-րդ դարի կենցաղով, այն տղամարդը, որը կամ ռուսաստաններում է, եվրոպաներում, ամերիկաներում, կամ նվաստացած է

26

Մանրիկ քայլերով Լեյլան. արքայից մինչև Հանրապետության հրապարակ



Քո աչքն՝ րը...

Այն տեսել են նրանք այնքա՛ն՝
Առճակատվող չար ու բարի...
Լրանց անփայլ հիշողության եզրագծում՝
Թաքնված է բեռը դարի:

Դեմքիդ ամեն խորշումի տակ
Մրդոված է սերը ջահել քո օրերի,
Մերը ծնած զավակների ու թոռների,
Բերկրանքը քո դարը դատած աշխատանքի,
Վաստակը քո հանուն հողի, հայրենիքի:

Նվազել է ու մարել է ուժը դալար քո ձեռքերի,
Բայց կանչը քո հպարտ գենի,
Քեզ բերել է ու խառնել է

այս ամբոխին ջահելների:

Դու պարում ես ու ցնծում ես
անուրջներում պապգայի...

Դո՛ւ ես այսօր իմ եղբորը
Քո աչքերով այդքա՛ն բարի:

Արմինե ՄԱՐԳՍՅԱՆ

Զույգ աչքեր՝ խորքում անհուն ամբարած,
Աչքերը ուրախ, աչքերը հույսով,
...Տառիկ, ապրեցիր դու էլ այս օրվան,
Աչքերով թախծոտ, հույսի աչքերով ...

Քո զույգ աչքերը ինչն է քնն տեսել,
Աչքերը ուրախ, աչքերը հույսով,
...Սև պատերազմի օրեր ես անցել,
Աչքերով տխուր, հույսի աչքերով...

Հիմա կանգնել է թոռների կողքին,
Աչքերը ուրախ, աչքերը հույսով,
...Ուժ ես ու հավատ մեր ապագային,
Աչքերով ժպտուն, հույսի աչքերով...

Տառիկ՝, գլուխ եմ ես քեզ խոնարհում,
Ծնկի եմ գալիս խոր ակնածանքով,
Միշտ մեզ հետ կանգնած
մեր խոշ շարքերում,
Աչքերով Հայի, հույսի աչքերով...

Կարեն ՄԳՐՍՅԱՆ



Մայիսի 1-ին՝ դեռ առավոտից 78-ամյա Վրանուհի Գետրգյանը (Լեյլա տատիկը) հանրահավաքի առաջին շաբթերում էր: Լուսանկարեցի, դուրս եկա տարածքից: Հետո արդեն կեսօրն անց էր, երբ նորից շրջում էի հանրահավաքի մասնակիցների միջով, ու առաջին շաբթում էլի ինքն էր անշարժ, ուշադիր լսում էր ԱԺ նիստի հարցու պատասխանն, ու աչքերի արտահայտությունը փոխվում էր: Ժամերի ընթացքում նա հայտնվեց լուսանկարիչների, ցուցարարների ուշադրության կենտրոնում, իսկ ավելի ուշ սոցցանցերն արդեն «Լեյլա» անունի կողքին դրեցին «հեղափոխական տատիկ», «հայոց տատիկ», «բոլորիս մեծ մամա» նշագրումները:

Արդեն երեկոյան գործընկերներս լուսանկարեցին Լեյլային արեւից այրված այտերով, ծախտը դեմքին:

Տասը ժամից ավելի Հանրապետության հրապարակում գտնվող շատերին հուզած տատիկը տարիներ շարունակ մասնակցում է ցույցերի եւ հանրահավաքների ամեն անգամ ոտքով հատելով կիլոմետր ձգվող ճանապարհը, որը նրան բերում է կենտրոն:

ԱՆՈՂ ԶՈՂՐԱՅԱՆ

50

սեփական ընտանիքի առաջ, այն մայրաքաղաքը, որը հռչակվել է անհնարինություն աստիճան, այն քաղաքացին, որը կամ միլիոնատեր է բոլոր արժույթներով, կամ անաստամ է, անշոր, կիսաքաղց, այն երիտասարդը, որը կամ կրթնաշնորհ պիջակով շրջող ապագա «վերնախավ» է, ապագա միլիոնատեր, կամ չի վստահում իր ապագային, նույնիսկ եթե սովորում է աշխարհի լավագույն բուհում, կամ ծվառած է իր աշխարհում, որը պարզվեց շատ էլ հարուստ է, լուսավոր, պայծառ, այն պաշտոնյան, որը բյուջեում փող չի գտնում երիտասարդ ռեժիսորին կամ գրողին աջակցելու համար, բայց պաշտոնապես, հայտարարագրով հազարավոր ու միլիոնավոր դրամներ է «խնայել» իր չնչին աշխատավարձից:

Մինչդեռ Հանրապետական վերնախավը, գոնե վերնախավը պետք է կարդացած լինե՝ Հրանտ Մաթևոսյանի այս հանձնարեղ գրողին, որն ասում էր. «...մի երեայի, մի գերմանացու չափ աշխատել մեր միավորի, մեր երեխայի վրա... ապա երկու օրվա հաց ու երկօրյա ընթացքի հեռանկար, և դու տես, թե քո չարը, իմ անկարը, Թումանյանի դառնացածը աչքներիս առջև ինչպես է դառնում աշխարհիս ամենաբարի, ամենասիրելի ժողովուրդը. երկու օրվա հաց, երկօրյա ընթացքի հեռանկար և ինչ հիանալի ժողովուրդը բարձրացավ քաղաքականների իսկական դառը ժամանակից իմ ծնողների ժողովուրդը. մի քիչ ջանք ինքներս մեզ վրա և ընթացքի երկօրյա հեռանկար կամ հեռանկարի թեկուզ պատրանք և տես թե ինչ շիտակ, արդարամիտ, ինչ քաջ ժողովուրդ է բարձրանալու իմ որդիների ժողովուրդը»:

Պատրանք, հասկանում է՞ք, հեռանկարի պատրանք... պատրանքից անգամ զրկված քաղաքացին էր քայլ անողը...

Նրա բոլոր պատրանքներն էին փշրված՝ արդարության, ազնվության, բարոյականության, քաղաքականության, տնտեսության, բիզնեսի, կրթության, մշակույթի, արվեստի մասին ունեցած պատրանքները...

Չշարունակեմ. սա երկար, շատ երկար պատմություն է և ոչ թե «նոր գրվող», այլ հին...

Բայց մի քանի խնդրի մասին՝ շատ հակիրճ ու...պարտադրվածորեն զգույշ...

Արցախի մասին

Արցախը մեր սրբության սրբոցն է, ու արդեն երեսուն տարի ողջ հայությունը ողջ հայությունը, իր նվիրումը, ուժը, միտքը, կարողությունները, իր տեսակավոր որձին նվիրաբերել ու գոհաբերել է Արցախին: Այո, հայ ժողովուրդը հասկանում է, որ, ինչպես սպարապետն էր ասում «...Այս երկրի սահմանները գծվում են արյամբ...այս երկրի մայրաքաղաքը սկսում է խրամատից», ինչպես Մոնթեն էր ասում «...Եթե կորցնենք Արցախը, կշրջենք հայ ժողովուրդի պատմության վերջին էջը», ինչպես Ազգայության էր ասում «Մա Հապստան է և վերջ», և այս գիտակցումով է, խորը գիտակցումով, որ հրաշք Գյումրին արդեն երեսուն տարի սերունդներ է մեծացնում «դրվիկներում», որ մեր գյուղը հանդուրժում է 18-րդ դարի կենցաղը, որ կոյուղի ունենալը, ճանապարհ ունենալը, լուսավոր փողոց ունենալը մեր շատ համայնքներում դեռ երազանք է և այլն, և այլն...

Այս գիտակցումով էր, որ երկու-երեք սերունդ դարձավ կորուսյալ, այս գիտակցու-

մով է, որ երիտասարդ մի պայծառ սերունդ իրենից հարյուրին գոհեց ապրիլյան պատերազմում ու գոհելու է եթե, Աստված մի արասցե, լինի կարիքը:

Ու Արցախը որպես «մահակ» օգտագործելու քաղաքականությունը առնվազն բարոյական չէ՝ առ հայ ժողովուրդը: Առնվազն ստորություն է, այդ թվում և գուցե առաջին հերթին հենց Արցախում ապրող մեր քաղաքացու հանդեպ: Մա հնարավոր է հասկանալ: Այո, այդ քաղաքականությունը մի ժամանակ անվերապ «աշխատել է», փակագծեր չբացեմ, դա շատերը գիտեն, բայց այդ «գործիքը» խոցում է հայ անհատի արժանապատվությունը: Գոնե Արցախը մի օգտագործեք «քաղաքականության» մեջ: Շատերը կամուֆլյաժներով նկարվում էին Արցախում, իսկ կամուֆլյաժի իրական տերերն ուրիշ էին: Ու միշտ նրանք են լինելու:

Ի վերջո, բա Արցախով մտահոգ երկիրը, իշխողը, իշխանությունը այսքան նողկալի հեռուստատեսություն կունենա, այսքան մշակութապագերծ հեռուստատեսություն կունենա ...

Ռուսաստանի մասին

Ռուսաստանը, պարզվեց, շատ ավելի արժանապատվորեն տարավ հեղափոխությունը Հայաստանում, քան հայաստանյան ռուսահպատակները: Ռուսները գերադասեցին պետական հարաբերություններ, պետական շահը, արժանապատիվ՝ հայաստանցուն, ռուսահպատակները հպատակության գինը: Ռուսները Հայաստան եկան վախով, բայց հեղափոխություն կերտողի հետ հանդիպումից դուրս եկան բաց ձեռքերով, ծայրտով:

Հայաստան պետության ծննդյան առաջին տարիներին Ռուսաստանը Հայաստանի և Հայաստանը Ռուսաստանի հետ ուներ բացառիկ արժանապատիվ հարաբերություններ, որից շահեց պետությունը: Երբ արժանապատվությունը փոխվեց հպատակության, երկիրը վերածվեց գույքի ու տրվեց պարսից դիմաց, տրվեցին նաև հպատակները, և Ռուսաստանը չէր մեղավոր, որ տրվածների հետ վարվեց այնպես, ինչպես սովորաբար վարվում են...տրվածների հետ:

Իսկ ի՞նչ չարեց Հանրապետականը...

Չհասկացավ, ոչ մի կերպ, ոչ մի օր չհասկացավ, թե ի՞նչ է արել ու ի՞նչ չի արել... ու վախենում չի հասկանում, չի հասկանալու, որովհետև դիմադրության ճակատում նույն խիստ անցանկալի, անախորժելի՝ տհաճ, խոտելի, խորշելի, հանուն ռուսականության ասած *одиножий* կերպարներն են, նույն քաղքենի կանայք են նույն տասնամյակային երեսպաշտությամբ, նույն մանիպուլյացիաներով, նույն ոճով, դեմքով, կերպով, զաղափարախոսության ու պետականապաշտության նույն ֆալշ նոտաներով:

Եթե չեմ սխալվում՝ 1990-ին էր, երբ ժողովուրդը ցնծում էր 88-ի հեղափոխության հաղթանակով (ասեմ, որ 88-ը բոլորովին այլ երևույթ էր, քան այս օրերի հեղափոխությունը, բայց սա այլ խոսակցության նյութ է), և հավաքականորեն սիրահարված էր հեղափոխության առաջնորդին, Հանրապետության հրապարակում իր մի ելույթում Լևոն Տեր-Պետրոսյանը մոտավորապես այսպիսի մի բան ասաց, որ անկախությունը տոն չէ, այլ քրտնաջան աշխատանք է: Բայց մենք օրյնկտիվ ու սուբյեկտիվ շատ

պատճառներով, քրտնաջանորեն չաշխատեցինք ու անկախությունը տոն չդարձավ:

Այսօր Նիկոլ Փաշինյանը շատ ավելի քաղաքացիական շեշտադրմամբ մոտավորապես նույնն է ասում: Օրեք առաջ նույն Հանրապետության հրապարակում հակադարձելով դերասանուհի Լայա Մնացականյանի Նիկոլ, ես քեզ հավատում եմ արտահայտությանը, մոտավորապես այսպիսի մի բան ասաց, որ ընդհանրապես հավատացե՛ք ինքներդ ձեզ, ընդհանրապես քաղաքական գործիչներին մի հավատացե՛ք, հավատացե՛ք ձեր կարողություններին, ուժին, վճռականությանը:

Եթե վերադառնանք Բորոգյուն՝ ուրեմն հավատանք անձի շարժումին: Եվ Աստված չանի, շարունակե՛ք սպասել, որ Նիկոլն է անկախությունը տոն դարձնելու ու սպասե՛ք տոնին՝ ոչինչ չանելով, չփոխելով, չփոխվելով, չաշխատելով, չհավատալով...

3.4. Ես, ամենայն անկեղծությամբ, մեծ ցավ ապրեցի, երբ տեսա, թե ինչպես է ողջ ժողովուրդը ցնծում Սերժ Մարգարյանի հրաժարականի օրը: Այդ համազգային ցնծությունը չկար նույնիսկ հոգևոր զարթոնքի մեր 88-ին: Եթե Սերժ Մարգարյանը պատահական մարդ լինե՛ր մեր երկրի վերջին երեսուն տարվա կենսագրությունում, ես այդ փաստին ուշադրություն չէի դարձնի: Բայց, կրկին ամենայն անկեղծությամբ եմ ասում, Սերժ Մարգարյանը պատահական մարդ չէր և անգնահատելի ներդրում ունի մեր պետությունում:

Ես, ամենայն անկեղծությամբ, մեծ ցավ ապրեցի, երբ տեսա, թե ինչպես է ողջ ժողովուրդը մոռացավ, ցավից մոռացավ, անզուսպ ցատումով տենչում Հանրապետականի ու նրա խորհրդարանականների (որովհետև նրանց մեջ մի քանի լավ ընկեր հաստատ ունեմ ու կարող, գիտակ մարդիկ հպատատ տեսնում եմ) հրաժարականները նվաստացածի մոնչոցի մեջ անգամ հավաքականորեն ժապով իր քաղաքակրթական բարձրությունը, որը շատերի է ամբողջ աշխարհին:


Կատարվածից հետևություն անելը կամ չանելը չգիտեմ, թե Սերժ Մարգարյանի համար այս պահին որքան է կարևոր, ակտուալ, (Հանրապետականի մասին էլ չեմ խոսում), բայց այն շատ կարևոր է Նիկոլ Փաշինյանի համար:

Մեծ, շատ մեծ կլինի մեր հավաքական ցավը, եթե տարիներ անց որևէ մեկը կրկին որոշի քայլ անել ու մերժել: Միտք, համերաշխության, հանդուրժողության մասին խոսելու ժամանակ այլևս չի մնա: Եվ մեր քաղաքակրթական արմատներն այլևս չեն փրկի առնվազն Նիկոլ Փաշինյանին:

3.4. 1. Որպեսզի երեսպաշտության դրոստորոմներ չլինեն, հպատակություն ընդունածների լեզվով մի փոքրիկ դիտարկում հանրահայտ Ալեքսեյ Վենետիկտովից.

«В фоновом режиме смотрю, что происходит в соседней Армении. И с самого начала меня не оставляет один вопрос. А где все те люди, которые обеспечивали большинство правящей партии? Встречные протесты, палатки и слоганы про «не надо раскачивать лодку», ну хотя бы в медиапространстве какие-то авторитетные высказывания, где это все? Где же он подался, как говорит Верка Сердючка. Вот и вся цена этой поддержке и этим голосам».

«Հայաստանում շատ Նիկոլներ կան», – ասում է վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ հայրը



Նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայրը՝ Վովա Փաշինյանը, ապրում է իր ծննդավայր Իջևանում, սակայն վարչապետի ընտրության առիթով երևանում էր՝ որդու տանը։ «Հետք»-ի նկարահանող խումբը գրուցել է Վովա Փաշինյանի հետ։

– Պարոն Փաշինյան, Դուք երբեք որդի ունե՞ք՝ Արտակ, Արմեն և Նիկոլ, ինչո՞ւ է երբեք որդիների մեջ Նիկոլի անունն այդքան տարբերվող։

– Անկեղծորեն ասած՝ ես չեմ որոշել, մայրիկս է որոշել։ Երբ Նիկոլը ծնվեց, ես Իջևանում չէի, և մայրիկս որոշել է ամուսնու անունը դնի, հայրս գնացել է պատերազմ, երբ ես մեկ տարեկան չորս ամսական էի, և չի վերադարձել։ Մայրիկս էլ որոշել է՝ Նիկոլ դնի, եկա, իմացա, շատ ուրախացա, որ հորս անունն է դրել։

1988 թվականին շարժման բուռն ժամանակներում Նիկոլն ընդամենը 13 տարեկան էր և շատ էր խանդավառվել, որ վերջապես հայ ժողովուրդն ուզում է անկախություն ձեռք բերի։ Իջևանի մշակույթի տան դիմաց միշտ հանրահավաքներ էին լինում, ինքն անպայման պետք է մասնակցեր, հաճախ հայրենասիրական բանաստեղծություններ էր գրում և այդ հանրահավաքների ժամանակ ժողովրդի համար կարդում էր, ժողովուրդն էլ շատ լավ ընդունում էր։ Նույնիսկ հանրահավաքներից մեկի ժամանակ Նիկոլը կոմերիտականներին կոչ արեց կոմերիտական տոմսերը հավաքեն ու դնեն աստիճանների վրա, թողնեն մաա։ Ու, իրոք, այդպես էլ արեցին երեխաները։ Հետո սկսեց կոմունիստների վերաբերյալ շատ սուր հոդվածներ գրել, դպրոցի պատերի վրա փակցնել, ուսուցիչները եկան դիրեկտորին բողոքեցին, տնօրենն էլ ինձ ասաց։ Ես կանչեցի Նիկոլին, ասեցի՝ Նիկոլ լ ջան, տենց բաներ մի՛ արա, չի կարելի, բայց իրենք, մեկ է, շարունակեց։

– Ձեր որդին 33 վարչապետն է, ի՞նչ ապրումներ ունեք։

– Չափից դուրս շատ եմ մտախոգ, որովհետև շատ եմ վախենում երեխայի մի փաստ հասցնեն, շատ դժվար ու ծանր է լինելու, ինչո՞ւ, առաջինը, որ երկիրը քայքայել են, հասցրել են անդունդի եզրին, գործազրկությունը, արտագաղթը, համատարած աղքատությունը... Ինչ ու՞՞, ինչ իմաստություն պետք է ունենա, որ կարողանա այդ բոլորը վերականգնել։ Իհարկե, ժողովուրդը շատ խանդավառված է, բայց ժողովուրդը նաև շատ արագ փոփոխությունների է սպասում, իսկ այդ դժվար գործը կարճ ժամանակում իր ավարտին հասցնելը շատ ծանր ու դժվար է լինելու, դրա համար ես մտախոգ եմ։

– Հաշվի առնելով նախորդ շարժումների ավարտը, մի քանի չստացված փորձեր՝ լավատեսություն ունե՞ի՞ք, որ այս անգամ շարժումը հաջողություն է ունենալու։

– Նախ՝ ես ընդհանրապես իր հետ քաղաքական հարցերով չեմ գրուցել, չեմ միջամտել իր գործերին, հեռվից դիտել եմ, մտածել եմ՝ ոնց կավարտվի, ինչ կլինի, անընդհատ Աստված էի կանչում՝ ինչ էլ լինի մեր ժողովրդի արյունը չթափեն։

2008 թվականի մարտի 1-ը հիշելով, որ ես էլ անմիջական այդ պահին ներկա եմ եղել գիշեր-ցերեկ... Այդ մտքից ուղղակի սարսափում

էի, որովհետև ես գիտեի, որ սրանք ամեն ինչի ընդունակ են։

– Ի՞նչ փոխվեց 2018-ին, որ ժողովուրդն առանց կաշկանդվելու աջակցեց Նիկոլ Փաշինյանի շարժմանը։

– Ինչպես ասում են ժողովրդի համբերության բաժակը լցվել էր արդեն, այլևս տեղ չկար դիմանալու, մի ինչ-որ շարժիչ ուժ էր պետք այս ժողովրդին, որ ոտքի կանգնի։ Այս սարսափելի վիճակն ինչքա՞ն կարելի էր համբերել ու տանել։

– Պարոն Փաշինյանը միշտ քննադատական ելույթներով է հանդես եկել՝ թե՛ որպես պատգամավոր, թե՛ որպես լրագրող իր հոդվածներով։ Դուք այդ քննադատություններն ինչպե՞ս եք ընդունել, չե՞ք վախեցել, չե՞ք ասել՝ ա՛յ Նիկոլ ջան, հերիք է, բա քեզ պե՞տք է, նման խոսքեր չե՞ք ասել։

– Երբեք, որովհետև երբ Նիկոլը գալիս էր Իջևան, ես մենակ մի բանի մասին էի մտածում՝ քաղաքական որևէ թեմայի շուրջ չգրուցել իր հետ, մտածում էի անընդհատ, որ երեխան մի քիչ հանգստանա, օդափոխվի, ներվերը մի քիչ հանգստանա։

– Ռուսական ՔԵԿ լրատվամիջոցին տված հարցազրույցում Դուք ասել էիք, որ Հայաստանում էլ ավելի խելոք մարդիկ կան, ովքեր կարող են երկրի առաջին դեմքը լինել։

– Լրագրողը հարց տվեց, թե Դուք ուզո՞ւմ եք, որ անպայման Նիկոլը լինի վարչապետ, ճիշտն ասած՝ ես պատասխանեցի, որ Հայաստանում շատ կան խելոք մարդիկ, հիմա ժողովուրդն ու՞մ կընտրի, թող նա էլ լինի, ինչո՞ւ միայն Նիկոլը, Հայաստանում մի՞ Նիկոլ է ընդամենը, շատ Նիկոլներ կան, հիմա ում ցանկանա, թող նրա թեկնածությունն էլ առաջադրի։

– Նիկոլ Փաշինյանը խառնվածքով ավելի շատ Զե՞՞գ է նման, թե՞ մայրիկին։

– Ավելի շատ իմ մայրիկին, որովհետև իմ մայրիկն է պահել Նիկոլին, Նիկոլը մայրիկիս այնքան էր սիրում՝ չափ ու սահման չկար։

– Հնարավո՞ր է ընտանիքով երևան տեղափոխվեք։

– Երբեք, ես իմ Իջևանը կյանքում չեմ թողնի։

– Ի՞նչ զգացողություններ ունի վարչապետի հայրը։

– Նախկինի պես, ոնց որ մինչև վարչապետ դառնալն էր, նույն վիճակն էլ ինձ մոտ մտնում է։ Ես տենց չեմ ուրախացել, չեմ վեր թռել, որ տեսե՛ք իմ որդին երկրի ղեկավարն է։ Ինչ-որ մեկը պետք է երկիրը ղեկավարի։ Կարևորը, որ լավ մարդ ղեկավարի, իր ժողովրդին, երկիրը սիրող մարդ լինի։

– Երբ որևէ մեկը բարձր պաշտոն է ստանում, շատ են խոսում, որ հիմա ազգականները նույնպես պաշտոններ կստանան։ Ի՞նչ եք կարծում Նիկոլ Փաշինյանը բարեկամներին պաշտոններ կտա՞։

– Երբեք, Նիկոլ Փաշինյանը, լինի բարեկամ, իշխանամետ, թե ընդդիմադիր, խելացի, պրոֆեսիոնալ մարդկանց պետք է փնտրի, այդպես էլ, համոզված եմ, կանի։ Երբեք տարբերություն չի դնի, որ էս մեկը հորեղբորս տղան է, մյուսը հորքուրիս թոռն է և այլն, և այլն։ Հանկարծ, եթե սխալվի այդպիսի բան անի, ես ինձ շատ խիստ վիրավորված կզգամ։

– Մեկ-երկու կարևոր խնդիր, որ կցանկանայիք առաջնահերթ լուծել Ձեր որդու ղեկավարած կառավարությունը։

– Առաջին հերթին մեր երկրի պաշտպանունակության բարձրացումն եմ համարում առաջնահերթ, երկրորդ՝ երկրում պետք է հաստատվի արդարություն, որ բոլորն օրենքի առաջ հավասար լինեն, ընտրյալներ չլինեն։

Սեդա ՂՈՂԱՍՅԱՆ
Գագիկ ԱՐԱՆՅԱՆ
Սարո ԲԱՂԱՍՏՐՅԱՆ



Նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանի ծնողներն ապրում են Իջևանում՝ համեստ տանը, հպարտանում են իրենց ժողովրդով և անհանգստանում որդու համար:

Sputnik Արմենիան պարզել է, թե ինչ մանկություն և ինչ պատանեկություն է ունեցել երկրի առաջնորդը:

«Փաշինյան, հյուր ունենք», – կանչում է ամուսնուն ժպտերես կինը՝ մի ակնթարթ գլուխը վեր բարձրացնելով մարզերից: Տնից հապճեպ, արագ քայլերով դուրս է գալիս մի տղամարդ: Մեզ տեսնելով՝ ողջունում է. «Բարի գալուստ: Մտեք: Այստեղ այնպիսի թթի օդի ունեն: Բժիշկներն ինձ արգելել են խմել, իսկ ձեզ կարելի է: Մտեք, մտեք»:

Վարչապետ Փաշինյանի ծնողների տունը գտնվում է Իջևան քաղաքի Բլբուլյան թաղամասում: Սովորական տուն է՝



Նիկոլ Փաշինյանի հայրական տունը Իջևանում



փոքր բանջարանոցով և ճոճաթոռով՝ արտաքուստ ոչնչով աչքի չընկնող: Հենց այստեղ է անցել Հայաստանի վարչապետի պատանեկությունը:

«Վերջին անգամ Նիկոլին տեսել ենք մայիսի 8-ին: Եկավ ուշ գիշերը, նստեցինք, խոսեցինք, հետո վաղ առավոտյան՝ ժամը 5-ին,

րեկան պատանի էր. այդ ժամանակ նրան դուր չի եկել Կոմերիտությունը:

«Գիտեք, թե ինչպես են ուրախանում, երբ թոռներս ինձ ասում են «տատ ջաասան»: Ընտանիքն ամենամեծ երջանկությունն է: Արդեն 30 տարի է ես երեք որդիների մայր եմ: Ամուսնության առաջին օրերին ես շփոթում

«Փաշինյան, հյուր ունենք», կամ այց վարչապետի ծնողներին

վեր կացավ ու գնաց Արցախ: Նրա վրա հիմա այնպիսի ահռելի պատասխանատվություն է դրված, իսկ ժողովուրդն անհավքեր է: 20 տարի թալանել են երկիրը, ինչպես և կարելի է մի քանի օրում կամ ամսում ամեն ինչ վերականգնել: Իհարկե, անհանգստանում եմ որդուս համար, իսկ եթե հույսերը չարդարացնի», – պատմում է Փաշինյանի հայրը՝ Կովա Փաշինյանը:

Նա, անպայման, կհասնի իր նպատակին, չէ որ մեծ համբերություն ունի, – ավելացնում է Երջանիկ Չիբուխյանը:

«Եթե նա ամեն ինչ այնպես անի, ինչպես պատկերացնում է, մենք կապրենք հիմնալի երկրում», – վստահ է նա:

Քչերը գիտեն, որ Երջանիկ Չիբուխյանը Նիկոլ Փաշինյանի հարազատ մայրը չէ: Ապագա վարչապետը 12 տարեկան էր, երբ մայրը մահացավ հիվանդությունից:

Կովա Փաշինյանն ամուսնացել է երկրորդ անգամ: Առաջին ամուսնությունից երեք որդիների մեծացրել է հենց Երջանիկը:

Հայրը պատմում է, որ Նիկոլի ապստամբ բնավորությունը սկսել է դրսևորվել հենց այդ տարիքում, անարդարության համար պայքարը նրա արյան մեջ է: Նա իր առաջին «բողոքի ակցիան» անցկացրել է, երբ 13 տա-

լի տղաներին՝ ով է նրանցից Արտակը, ով՝ Արմենը, ով՝ Նիկոլը: Իսկ հիմա նրանք ամենահարազատն են», – երջանիկ ժպտող դեմքին խոստովանում է տիկին Երջանիկը:

Երջանիկ Չիբուխյանն ամուսնուն ազգանունով է դիմում՝ Փաշինյան, երբեմն էլ՝ Վովա: Մենք խնդրում ենք նրանց իրար մոտ կանգնել՝ լուսանկարելու համար: Երջանիկն ուղղում է ամուսնու վերնաշապիկը, իսկ երբ առաջարկում եմ գրկախառնվել, երկուսն էլ պատասխանում են հուզիչ ամաչկոտությամբ. «Վայ, մեր տարիքում ինչ գրկել»:

Հենց այդ պահին տան կողքով անցնում է էքսկուրսիայի եկած խումբը, երիտասարդ ուսուցչուհին 7-8 տարեկան երեխաներին ցույց է տալիս Փաշինյանների տունը: Ամուսինները չեն զարմանում, ասում են, որ իրենց տունը դարձել է Իջևանի տեսարժան վայրը:

«Մեզ գրեթե ամեն օր շնորհավորում են և, իհարկե, տարբեր բաների մասին խնդրում՝ մի գուցե Նիկոլը կարողանա որդուս գործի տեղավորել, միգուցե այս, միգուցե այն: Իսկ մենք ոչ մի բան չենք ասում Նիկոլին, գիտենք, որ կբարկանա: Նա կառուցելու է երկիրը՝ հավաքելով խելացի, տաղանդավոր և չկոռումպացված մարդկանց, այլ ոչ թե ազգականների», – ասում է Երջանիկը:

Մտղները, իհարկե, հպարտանում են իրենց որդիով, բայց, ինչպես ասում է Կովա Փաշինյանը՝ իրենց ժողովրդով ավելի շատ են հպարտանում: Չէ որ ժողովուրդը հասել է իր նպատակին, պաշտպանել է իր պատիվը, ազատվել անցանկալի իշխանությունից, իսկ Նիկոլն ուղղակի մարդ է, որին ժողովուրդը վստահել է և հանձնել կառավարման ղեկը:



Կովա Փաշինյանն ու Երջանիկ Չիբուխյանը

Նիկոլ, ինձ հիացնում է քո քաղաքական տաղանդը, սոկրատյան հանգստությունը. Յենրիկ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ



Հրապարակվել է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Յենրիկ Հովհաննիսյանի խոսքը ուղղված

«Իմ քայլը» շարժման առաջնորդ, ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին.

«Նիկոլ,

Ինձ հիացնում է քո քաղաքական տաղանդը, իմացությունը, կամքը եւ սոկրատյան հանգստությունը քո ստուգապես կողմնորոշված պատասխաններում: Դու գերազանցել ես մեր անկախության շրջանի բոլոր քաղաքական գործիչներին: Քեզ հակադրվողները պետք է գիտակցեն, որ իրենց յուրաքանչյուրին մեկ առ մեկ տեսնում ու լսում են ամբողջ Հայաստանում ու Սփյուռքում»:

Վերջում վարչապետի ծնողները սեղան են գցում մեզ համար, երբ փորձում ենք հրաժարվել, ասում են, որ կնեղանան: Նրանց որդին էլ է լրագրող եղել, գիտեն, թե դա ինչ ծանր աշխատանք է: Նստեցինք, խմեցինք ժողովրդի կենացը, հետո՝ երկրի, հետո էլ ամբողջ աշխարհում խաղաղության համար, հետո արդեն չեմ հիշում, թե ինչ կենաց խմեցինք: Ճիշտ էին մեզ նախազգուշացրել Իջևանի կենտրոնի առևտրականները:

«Փաշինյանների տնից ձեռք չեմ թողնի, չեք էլ վերադառնա մեզ մոտ: Այնպես որ, հիմա մեզ հետ մի բաժակ խմեք: Նրա և նրա ծնողների առողջության կենացը»:

Ժաննա ՊՈՐՈՍՅԱՆ

Միխիթար ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ քայլարշավի հեղինակ եւ Սփյուռքի նախարար



2018-ի գարնանը փողոկի Հայաստանը հայտնվեց համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում: Այստեղ մարդիկ խաղաղ բողոքում են, փակում փողոցները, երգում, խորոված անում, հյուրասիրում միմյանց, առավոտյան էլ հավաքում իրենց հետեւից: Սա է հայկական հեղափոխությունը, որը սկսվեց Գյումրու հրապարակից՝ մի քանի հոգու քայլերով: Նիկոլ Փաշինյանն ու իր կողմնակիցները ճանապարհորդ սկսեցին Գյումրու սակավամարդ հրապարակից: Ապրիլի 27-ին՝ մեկնարկից 28 օր անց, նրանք վերադարձան նույն հրապարակ, որտեղ, ժողովրդական խոսքի համաձայն, ասելը գցելու տեղ չկար: Այս ամենի հիմքում ամիսներ շարունակ մշակված մարտավարություն էր: Քայլարշավ սկսելու գաղափարի հեղինակը 27-ամյա Միխիթար Հայրապետյանն է, ով նշանակվեց ՀՀ Սփյուռքի նախարար:

Քայլերի ընթացքում Միխիթարն աչքի չընկավ ակտիվությամբ, նա քայլում էր թիկունքում՝ առանց ավելորդ հայարտության, որ այս ամենն իր գաղափարն է, պատասխանում էր քաղաքացիների զանգերին ու առաջինը տեղեկանում նրանց տրամադրությունների մասին, քանի որ Նիկոլ Փաշինյանն իր հեռախոսահամարն էր տալիս քաղաքացիներին, որպեսզի հարցերի դեպքում կապվեին թիմի հետ:

Քայլարշավ սկսելու գաղափարը հիմա է փայլուն հնչում, երբ կա տեսանելի արդյունք, իսկ սկզբնական փուլում կային մի շարք մտավախություններ: Սա է պատճառը, որ Միխիթարի առաջարկը թիմակիցները մի անգամ մերժեցին: Այնուամենայնիվ, նա համառոտ է, մշակել գաղափարն ու երկրորդ անգամ ներկայացրել թիմակիցներին: Այս անգամ այն արժանացել է նրանց միաձայն հավանության:

Միխիթարի հետ մեր հանդիպումը կայացավ «Դիվանբաշի» փաբում, որտեղ էլ խմորվել ու զարգացել է ամբողջ պրոցեսը: Ասում է չնայած «Քաղաքացիական պայմանագիրը» որդեգրել է թափանցիկության սկզբունքը, մարտավարական նկատառումներից էլենլով՝ որոշել են քննարկումները կուսակցության գրասենյակում չանել: Ձեռավորվել է «կրեատիվներին» 6-8 հոգանոց խումբ, որը

մշակել է օրակարգը, դրեն-կոդը, ճամբարի ձևը, տեղը, գաղափարական հարցեր:

Միխիթար Հայրապետյանը մասնագիտությամբ արեւելագետ է, ավարտել է ԵՊՀ-ն: Ունի մագիստրոսի կոչում: Նորանշանակ նախարարը զբաղվել է զբոսաշրջությամբ կազմակերպելով ուղևորություններ դեպի Արեւմտյան Հայաստան: 2015 թվականից իրականացնում է տարբեր կրթական ծրագրեր: Մասնագիտացած է նաեւ ոչ բռնի գործողությունների, խաղաղ անհնազանդության մեթոդաբանության մշակման, դրանց մատուցման հարցերում, որտեղից էլ սկսվում է շարժման հիմքը:

«Քայլարշավի գաղափարի հիմքում ընկած է Մահաթմա Գանդիի ուսմունքը ոչ բռնի պայքարի վերաբերյալ: Այս տեխնոլոգիաների մեթոդաբանությանը վաղուց էմ ծանոթ: Օգտվել ենք 1930 թվականին «Աղի երթի» ընթացքում կիրառված տեխնոլոգիաներից, մասնավորապես, երբ Գանդին 387 կմ քայլեց սոցիալական հարցեր բարձրացնելու նպատակով: Նա երթը սկսեց 8 հոգով, ավարտեց 80 հազարով: Երկրորդ օրինակը վերցրել ենք Թուրքիայի ընդդիմադիր առաջնորդ Քեմալ Բըլքեչթաօղլուի 2017 թվականի քայլերից, երբ նա քաղաքացիական անհավասարության դեմ ընդդիմացել էր: Նա ևս միայնակ մեկնարկեց քայլերը եւ շուրջ 300 հազար կողմնակիցներով մուտք գործեց Ստամբուլ», - պատմում է նա, ապա ավելացնում, որ հաշվի չեն առել նշված շարժումների արդյունքները, օգտվել են քայլերի միջոցով իրագրված ակցիա անելու, մարդկանց թիվը բազմապատկելու տեխնոլոգիաներից: Եթե նշված 2 դեպքում կիրառվել էր 24-օրյա քայլերի տարբերակը, Միխիթարի գաղափարի շուրջ համախմբված թիմը կանց է առել 14-օրյա քայլերի վրա հաշվի առնելով Հայաստանում քաղաքական իրողություններն ու ժամկետների սղությունը: Գյումրուց քայլարշավ սկսելը եւս պատահական չէր: Նրա խոսքով Գյումրի-Վանաձոր-Դիլիջան-Հրազդան-Արմավիր-

Երեւան երթուղին գծելիս իրենք հաշվի են առել ոչ միայն այն, որ Գյումրին, Վանաձորն ու Երեւանը Հայաստանի խոշորագույն 3 քաղաքներն են, այլեւ այն փաստը, որ տվյալ բնակավայրերում առկա քաղաքական տրամադրվածությունները գերակշռմամբ ընդդիմադիր են: Մանրակրկիտ մշակված ծրագիրը պայքարի ընթացքում վստահություն է ձեռավորել թիմի հանդեպ:

«Գուցե վերամբարձ հնչի, սակայն առաջին անգամ ընդդիմությունը քաղաքական լրջագույն պրոցես սկսելուց առաջ հաշվարկել էր առնվազն իր քայլերը եւ ուներ հստակ ծրագիր, գործողությունների հրստակ պլան: Մենք ներկայացրինք, որ մեր հաշվարկներով Գյումրուց քայլարշավ սկսելու դեպքում ապրիլի 13-ին Երեւանի հանրահավաքին կմասնակցի 4000-5000 մարդ: Նիկոլ Փաշինյանն առաջ եթե այդ օրն իսկապես այդքան մարդ հավաքվի, խոստանում եմ իշխանափոխություն անել: Ապրիլի 13-ի հավաքի համար վերջում հաշվարկվեց եւ հրապարակվեց 4700 թիվը»:

Միխիթարի խոսքով քայլարշավի քննարկումները սկսվել են 2018-ի հունվարից: Փաստը, որ Նիկոլ Փաշինյանը մարզվել սկսել էր օգոստոսից, Միխիթարը բացատրում է նրանով, որ քաղաքական պրոցես իրենք այսպես, թե այնպես սկսելու էին, սակայն 2017-ի օգոստոսին պայքարի ձեռնադիր դեռ ոչ ոք չգիտեր:

«Գաղափարը ծնվեց հունվարին, հաստատվեց փետրվարին: Առաջին անգամ այն մերժվելու հիմնական պատճառն այն էր, որ մենք մեր քաղաքական առաջնորդի գլխավորությամբ ասել էինք, որ հանրությանը դուրս կբերենք փողոցային պայքարի միայն մեկ անգամ: Ռիսկը, որ մենք կտանենք պարտության, հիասթափության ահռելի էր: Բոլորս էլ հասկանում էինք, որ ինչ-որ իմաստով սա «վաբանկ» է, որովհետեւ երբ հայտարարում ես իշխանափոխության մասին՝ նկատի ունենալով ոչ միայն Մերձ Սարգսյանի պաշտոնավարումը, այլեւ ընդհանուր իշխանափոխությունը, դա ինչ է բազմաթիվ ռիսկերով, կարող է հեղթական անգամ կոտրել ժողովրդի ողնաշարը: Պատմության ընթացքում ընդդիմադիրների կողմից նման հարվածներ ժողովուրդն արդեն ստացել էր: Այնուամենայնիվ, ես չհանձնվեցի ու ես մեկ անգամ փորձեցի համոզել, որ եթե փորձում ենք անել իշխանափոխություն, դա պետք է լինի ամենառիսկայինը, դա պետք է լինի «վաբանկ»: Բանակցությունների սեղանին դրված էր փաստաթուղթ, որը մշակված է մեր թիմի կողմից:

Բարեբախտաբար, ԲՀ-ն, չնայած բոլոր ծանրակշիռ փաստարկներին, միաձայն կողմ քվեարկեց քայլերին: Այն ժամանակ նշվում էր «14+4» օր բանաձեռը, որը հետո դարձավ 24 եւ ավելի», - պատմում է նա:

Երկու անգամ իր գաղափարն առաջ քաշած երիտասարդ գործչի համար պատասխանատվություններ մեծ էր, սակայն նա հավաստիացնում է, որ առաջին իսկ օրվանից թիմակիցները թույլ չեն տվել անձնական պատասխանատվություն կրել այս ամենի համար. «Ի պատիվ իմ թիմակիցներին պիտի ասեմ, որ ամիջապես կիսել են

ինձ հետ այդ պատասխանատվությունը: Մենք ունենինք պատասխանատվություն հանրության առաջ: Ի սկզբանե ունենինք գաղափարախոսություն, որ սա լինելու է քաղաքացու, ոչ թե քաղաքական գործչի քայլը: Մեր պայքարի առաքելությունը ՀՀ քաղաքացու հաղթանակն էր, որով ուղղորդվել ենք, երբ քայլել ենք, մեզ բերման են ենթարկել, կամուրջներ ենք փակել»:

Ինքը Մխիթարը երբեմն բերման չի ենթարկվել: Ասում է ինքը շատ արագ է, 3 անգամ հայտնվել է ռադիկալական մեթենայում, սակայն ճարպկության շնորհիվ կարողացել է դուրս պրծնել այնտեղից, իսկ ահա ծեծ, իր խոսքով, «կերել է ես, փառք Աստծո, թիմակիցներից հետ չի մնացել»:

Մխիթարը ժպիտով է հիշում, որ շատերն իրենց ծաղրում էին, երբ 2016-ին ՊՊՕ գնդի գրավման դեպքերի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հասարակությանը կոչ էր արել վեր բարձրացնել ձեռքերը՝ ի նշան խաղաղության: «Այդ ժամանակ կուսակցությունը գործում էր 1 տարի: Նիկոլ Փաշինյանն ինքնաբերական կերպով հավաքվածներին կոչ արեց ձեռքերը վեր բարձրացնել, նպատակն ուժայիններից ցույց տալն էր, որ մենք չունենք քար, փայտ, կտրող գործիք: Մի բան, որն այլևս թույլ չէր տալիս ռստիկանությանն ուժ կիրառել ժողովրդի դեմ: 2 տարի շարունակ մեզ ծաղրել են, մեղադրել, այդ գաղափարախոսությանը լուրջ չեն վերաբերել համեմատելով հանձնվող ձեռքերի հետ: 2 տարի աշխատանք տարանք հանրության հետ փորձելով բացատրել, որ բաց ձեռքերն օդում բավականին ուժեղ ձեռքեր են: Ինչպես Գանդին էր ասում, ուժեղ է նա, ով կամքով է ուժեղ: Քաղաքացու երգում էլ շատ կարեւոր մի խոսք կա մեր կամքը ուժեղ է քարից էլ, մեր ոգին հանձնվել չգիտի: Սրանով մենք ցույց էինք տալիս մեր կամքը: Երբ հիմնադրվեց «Քաղաքացիական պայմանագիրը», որի հիմնական նպատակն իշխանափոխությունն էր, մենք հասկանում էինք, որ դրա համար երկու ուղղություն կար ընտրական գործընթաց, կամ թալշյա հեղափոխություն: Մեր կուսակցության հիմքում ընկած էր առանց բռնության համակարգային փոփոխություններն անելու փիլիսոփայությունը, ինչն էլ ինձ ստիպել էր լինել կուսակցության հիմնադրման ակունքներում», – պատմում է Մխիթարը:

Այսօր արդեն նորանշանակ նախարարը հիմա ժպիտով է հիշում, թե ինչպես էին հարգատեսներն ու բարեկամներն հորդորում չտանջել իրենց, միեւնույն է, ոչինչ չի փոխվի: «Մեծ մասամբ, չկար հավատ, որ հարուցված քաղաքական պրոցեսները լուծելու են այն խնդիրները, որոնք մենք դրել ենք մեր առջեւ: Հատկապես առաջին օրը, երբ մի կերպ դիմացանք Ջաջուռի ցուրտ քամիներին, շատերը զանգում էին, գրում, որ անիմաստ ենք մեզ տանջում, ժողովուրդը չի գնահատի, ոչինչ չի փոխվի: Իհարկե, հատուկ չէին անում, բայց մեզ դեմոստիկացնում էին, իսկ մենք շարունակում էինք քայլել, լինել վճռական: Բազմաթիվ իրադարձություններ էղան, որոնք կաթիլ առ կաթիլ մեծացրեցին հավատը, որ այս շարժումը ունի ներքո: Մեր գյուժնեցի ընկերներից մեկն ասում է, որ հեղափոխությունը սկսեցին «10 վերջացած ռոմանտիկները», – հիշում է Մխիթարը:

Առանց ավելորդ պայծառի նա նշում է, որ, որքան էլ ի սկզբանե հավատացել են գաղափարին, որեւէ երաշխիք չկար, որ իրենց հարուցած քաղաքական գործընթացը բե-

րելու է ոչ միայն Մերժ Մարգարանի հրաժարականին, այլև հեղափոխության:

«Այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ եթե մենք ցանկանում էինք մեր քայլն անել այդ երեւոյթների դեմ, ինչ-որ հավատ ունենինք մեր ներքո: Այն խումբը, որը զբաղվում էր «Իմ քայլը» շարժման մշակմամբ, ուներ հստակ վստահություն, որ ապրիլի 13-ին մի քանի հազար մարդ լինելու է Ազատության հրապարակում: Ամեն ինչ կախված էր նրանից, թե մենք ինչպես կկարողանայինք այդ ուժն օգտագործել հետագայում շարժումը հարյուրապատկելու, այն հաջողությամբ ավարտելու համար: Ունենալով բազմաթիվ մտավախություններ, գիտակցելով ամբողջ լրջությունը, ռիսկերը մենք գնացինք այդ քայլին, որովհետեւ հավատում էինք, որ եթե կա մի ճանապարհ, որը կբերի փոփոխությունների, մենք ընտրել ենք: Առնվազն ավելի լավ մշակված փաստաթուղթ, քան ճանապարհային այս քարտեզն էր, չունեինք», – նշում է նա:

Հաջողության գրավականները, նրա խոսքով, տարբեր են եղել մարտավարությունը, ուսանողության և քաղաքացիական ակտիվի հետ սերտ համագործակցությունը:

«Ապակենտրոնացված պայքարի գաղափարը, մեթոդների մի մասը ստացանք մեր ընկերներից: Երբ Երեւանում էինք, մեր շարժումը մի քանի միջ կոորդեց: Բոլորը սպասում էին, որ Ազատության հրապարակում 4 օրանոց նստացույց էինք անելու, սակայն մենք ճամբար խիեցինք Ֆրանսիայի հրապարակում՝ այդպիսով մեխանիկորեն փակելով ճանապարհները: Ֆրանսիայի հրապարակում 2 օրերի ընթացքում թվաքանակի նվազում էղավ, հասկացանք, որ պայքարին նոր խթան է պետք, և որոշեցինք մարտավարական փոփոխություններ իրականացնել, ինչից հետո սկսվեց ապակենտրոնացված մասշտաբային պայքարը Երեւանում և հանրապետությունով մեկ: Վարչապետի ընտրության նախորդ օրը մեզ հաջողվեց մոտ 20 հազար մարդու մոբիլիզացնել: Տարիներ շարունակ եղել է համոզմունք՝ եթե ընդդիմությունն ուզում է հաջողություն, պետք է գրավի Ազգային ժողովը կամ Բաղրամյան 26-ը: Հասնելով փշալարերին մենք հասկացանք, որ բախումն անխուսափելի կլինի, ուժայինները շատ ավելի մեծ առավելություն ունեն, երբ մենք բոլոր ուժերը կենտրոնացնում ենք մի տեղում, և հրաժարվեցինք բարձրանալ ԱԺ: Կրկին կոչ արեցինք ապակենտրոնացված պայքար մղել», – նշում է նա:

Թեև Մխիթարն արդյունքը պայմանավորում է տարբեր գործոնների շղթայով, նա համարում է, որ Նիկոլ Փաշինյանի և Մերժ Մարգարանի հանդիպումից իրենք հաղթած են դուրս եկել:

«Մերժ Մարգարանի պահվածքը, ուղերձը՝ կապված մարտի 1-ի հետ, բանակցություններից դուրս գալը ցույց տվեցին, որ մենք ճիշտ ճանապարհ ենք ընտրել: Այնուհետև տեղի ունեցան ձեռքբերականությունները, փորձ արվեց գլխատել շարժումը, որը, ըստ իս, ամենաանհեռատես ու ճակատագրական որոշումներից մեկն էր: Իմ գնահատմամբ, նրանք փորձում էին գլխատել շարժումը, սակայն մարդիկ կրկին ապաստվեցին և շարունակեցին մարտնչել՝ նակագմակերպված», – ասում է նա:

Շարժման ընթացքում տարբեր կարծիքներ էին հնչում, որ պետք է ուժերը մեկտեղել, միասին լինել, այս կամ այն կերպ վարվել: Թեև աշխատանքային թիմը հետևողական էր քննարկումներին օնլայն և օֆլայն

հարթակներում, Մխիթարը հավաստիացնում է, որ ի սկզբանե մշակված պլանից գրեթե չեն շեղվել:

«Եթե անգամ եղել են փոփոխություններ, դրանք աննշան էին: Ունենինք օպերատիվ խումբ, որը մշտապես հետևում էր արձագանքներին օնլայն և օֆլայն հարթակներում, սակայն մեր թիմը հավատացել է ի սկզբանե մշակված մարտավարության հաջողությանը և հավատարիմ է մնացել մեթոդաբանությանը, տեխնոլոգիաներին: Ի դեպ, մեր թիմն ասելով նկատի չունենում էինք «Իմ-ն, նկատի ունենում է «Իմ քայլը» նախաձեռնության, թե՛ «Մերժիր Մերժին» նախաձեռնության, թե՛ ուսանողության, թե՛ քաղաքացիական ակտիվիստների ներկայացուցիչների մասնակցությունը», – նկատում է նա:

Այս օրերին ղեկավարություններն էլ շատ են եղել: Մխիթարը նշում է հիգիենայի պարագաների ապահովումից մինչև վրանային պայմանների անհարմարավետությունն ու սնունդը, սակայն դրանց վրա կենտրոնանալ չի ուզում: Ասում է այդ ամենին գիտակցաբար են գնացել:

«Չնայած բոլոր բարդություններին՝ մենք վայելել ենք այդ 14 օրը, – շեշտում է նա, իսկ հարցին՝ այնուամենայնիվ, ո՞րն էր ամենաբարդ օրը, պատասխանում է կառավարական արագության, առանց նույնիսկ մտածելու Ջաջուռում անցկացրած գիշերը: – Այդ գիշեր ջերմաստիճանը մինչև -15 էր: Ընդ որում, խնդիրն այդքան ցուրտ չէր, որքան սաստիկ քամին, որը վրանները պոկում-տանում էր: Վրանների դռները պոկվել էին, և մենք պառկած էինք գրեթե բաց երկնքի տակ: Երբ առավոտյան արթնացանք ու հասկացանք, որ ողջ ենք մնացել, գոնե այդ 6-7 հոգով հասկացանք, որ կարող ենք իշխանափոխություն անել», – հիմա արդեն ժպիտով հիշում է նա:

Քայլերթի նախաձեռնողները մշակել էին որոշակի կանոններ: Կանոնների մեջ էր մտնում, օրինակ, պիշակով քայլերթի չգալը, չծխելը (ծխել թույլատրվում էր որոշակի հեռավորության վրա), տարածքը չաղտոտելը, իրենցից հեռու տարածքը մաքրելը և այլն:

«Դրեն-կողը հանրության վրա չէր տարածվում, սակայն մեր թիմը պահպանում էր: Բացի հարմարավետությունը, դրեն-կողը նաեւ փիառի, Նիկոլ Փաշինյանի իմիջի ձեռավարման հարցն էր լուծվում: Թեև մշտապես նշում ենք, որ սա քաղաքացու քայլն է, հասկանալի է, որ գործընթացը հարուցողը Նիկոլ Փաշինյան քաղաքական գործիչն է: Չափազանց կարեւոր էր նրա կերպարի ձեռավարումը որպես պայքարող: Բոլորովին այլ կերպ կընկալվեր, եթե նա կոստյումով դուրս գար քայլերու», – ասում է Մխիթարն ու շեշտում, որ Փաշինյանի կերպարը թիմից առանձնացնելու խնդիր չի եղել: Թիմը պետք է լինեք ուսապարկերով, հարմարավետ կոշիկներով:

Պայքարի իր կոշիկները Մխիթարը շատ արագ է ընտրել գնել է առաջին ամենահարմար մարզակոշիկները, որոնք հագել է ոչ միայն Գյումրուց Երեւան ճանապարհին, այլև Երեւանի քայլերթերին, հիմա էլ խնամքով պահում է 14 բարդ, բայց լավ օրերի խորհրդանշիչը: Պահում է նաեւ իր ուսապարկը, որի վրա ամրացված է «Քայլ արա» կրծքանշանը: Մյուս անբաժանելի իրը ջրի շիշը կորցրել է բախումներից մեկի ժամանակ:

Մխիթարի խոսքով՝ քաղաքացիական ակտիվություն ցուցաբերում է գիտակից ողջ կյանքում: «Գուցե դա բավականին ուշ է եկել ինձ մոտ՝ 17 տարեկանում: Այն ժամանակ

Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց քաղաքականություն վերադառնալու որոշման մասին: Ես նրա կառավարման տարիների մասին լսել էի եւ նրականը, եւ բացասականը, սակայն Ազատության հրապարակ գնալ ինձ մղում էր գործող իշխանության դեմ պայքարը», – ասում է նա:

Միխիթարը վստահեցնում է 17 տարեկանում ցուցարարների շարքերը համայնելիս չէր պատկերացնում, որ 10 տարի անց իր գաղափարի շուրջ շարժում է ձեւավորվելու, ինքն էլ նախարար է դառնալու: Այն ժամանակ նա իրեն տեսնում էր որպես Թուրքիայում առաջին հայ դեսպան, իսկ ներքաղաքական պրոցեսների հանգուցալուծումն ավելի մոտ էր թվում: «Նման ապագա չէի պատկերացնում, որովհետեւ այն ժամանակ հույս ունեի, որ առիթ չի լինի այսքան տարի սպասել, հավատացած էինք, որ շուտով հաղթելու ենք»:

Միխիթարը շեշտում է «Իմ քայլը» ի սկզբանե ժողովրդին մոբիլիզացրել էր ընդդեմ սոփի, կեղծիքի, Սերժ Սարգսյանի ու ՀՀԿ-ի, սակայն դրան գուցահեռ իրենք ունեին «հանուն» գաղափարներ: «Մենք նշում էինք, որ դա հանուն նոր, երջանիկ, ազատ Հայաստանի է, հանուն օրինականության, պետականության»:

Այս ընթացքում տարբեր կարգախոսներ են ձեւավորվել «Դուխով», «Միրո եւ համերաշխության հեղափոխություն» եւ այլն: Միխիթարի համար ամենակարեւոր կարգախոսը հնչել է դեռեւս 11 տարի առաջ. «Ես 2007 թվականից գոռում եմ «Մենք ենք տերը մեր երկրի», սակայն առաջին անգամ 2018-ին եմ զգացել, որ մենք ենք տերը մեր երկրի: Այդ արտահայտությունն ինձ համար անկյունաքարային է: Դա նաեւ գաղափարական կարելու մաս ունի իր մեջ: Սա անհատի հաղթանակ չէր, որեւէ քաղաքական կազմակերպության հաղթանակ չէր: Ես համոզում ունեմ, որ եթե, օրինակ, ՔՊ-ն արտահերթ ընտրություններում ստանա հանրության վստահության քվեն եւ մեկ ամիս անց ձախողի, որեւէ սարսափելի բան չի լինի, որովհետեւ նրան փոխարինելու եկած իշխանությունն արդեն հաշվի է նստելու ժողովրդի հետ առնվազն ենթագիտակցական մակարդակում, չասեմ վախենալու, բայց զգուշանալու է, որովհետեւ սա մի ժողովուրդ է, որը սեփական ձեռքերով հեռացրեց Սերժ Սարգսյանին ու Հանրապետական կուսակցությանը: Սա արդեն հաղթանակ է՝ իշխանության կլինի ՔՊ-ն, թե այլ քաղաքական ուժ, երկրորդական է», – նշում է նա:

Մեր հերթիքն էր ժամանակով Միխիթար Հայրապետյանի նախարար նշանակվելու մասին դեռեւս հայտնի չէր: Նա համառորեն լռում էր, թե ինչ պաշտոն է ստանձնելու կառավարությունում, ստանձնելու է, թե ոչ: Հիմա նա Հայաստանի նոր իրականությունը կերտողներից մեկն է այս պահի դրությամբ ՀՀ ամենաերիտասարդ նախարարը, ով 3 օրից նոր կարգավիճակում կնշխ 28-ամյակը: Նախարարի պորտֆել ստանալուց հետո Միխիթարի հետ գրույցը համայնեցինք:

Միջուկի հետ աշխատանքը նրա համար նոր չէ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ դեկավարել է «ՔՊ» Միջուկի հետ կապերի բաժինը: Չնայած երիտասարդ տարիքին վստահ է, աշխատանքի շնորհիվ կապացուցի, որ արժանի է լինել այդ տեղում: «Պատասխանատվությունը սարսափելի մեծ է՝ անկախ տարիքից: Մենք ստանձնել ենք քաղաքական պատասխանատվություն հանրության, ժողովրդի առաջ: Չունեն

մտավախություն կապված վարչական կառավարման փորձի պակասի հետ, քանի որ տարիներ շարունակ համակարգել եմ կուսակցության Միջուկի հետ կապերը: Տեղյակ եմ ոլորտի խնդիրներին: Նախընտրական շրջանում այս ոլորտում մեր ծրագիրը մշակողներից մեկն եմ եղել: Պատկերացում ունեմ լուծման տարբերակների մասին: Իհարկե, նախարարության գործունեության ընթացքում դրանք նաեւ կփոփոխվեն, որովհետեւ մենք մտադիր ենք ավելի սերտ համագործակցել Միջուկի հետ, ուշադիր ենք լինելու նրանց առաջարկներին: Ես հաստատական եմ, վճռական, վստահ թե՛ իմ սեփական ուժերի, թե՛ իմ թիմի վրա: Այս պաշտոնը ստանձնելու վերաբերյալ նախնական քննարկումներին տվել եմ իմ համաձայնությունը, որովհետեւ, ըստ իս, իմ քաղաքական թիմի համար ամենաբարդ փուլը նոր է սկսվում: Այս իմաստով քաղաքական պատասխանատվություն ստանձնելն ինձ համար սկզբունքային հարց էր: Չեմ խուսափում պատասխանատվություն ստանձնելուց: Հիմա մեր պետության համար թեւակոխում ենք բեկումնային շրջան», – ասում է նա միաժամանակ վստահեցնում ոչ գաղափարը մշակելիս, ոչ էլ Ջաջուրի ամենավատ գիշերը լուսացնելիս պաշտոն ստանձնելու մասին չի մտածել:

«Ամենայն անկեղծությամբ եմ ասում ես եւ իմ քաղաքական թիմը մեր քայլն արել ենք բացառապես որպէս ՀՀ քաղաքացիներ: Նիկոլ Փաշինյանը եւս: Մենք դուրս չենք էլել քայլելու եւ փողոցները բոկակալ անելու որպէս քաղաքական գործիչներ: Անձնական իմաստով քաղաքական ամբիջիաներ չենք ունեցել: Երբ քաղաքական իրողությունը երկրում թույլ է տվել գտնաձնել երկրի կառավարման մանդատը թեկուզեւ ժամանակավորապէս, միայն այդ ժամանակ ենք սկսել անդրադառնալ այդ թեմային: Նման քննարկումներ սկսվել են միայն այն բանից հետո, երբ ժողովրդի թեկնածուն՝ Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետ», – պատմում է նա:

27 տարեկանում նախարարի պաշտոն ստանձնելը Հայաստանում նոր երեւոյթ է, աշխարհում քիչ հանդիպող: Նա կրկնակի պատասխանատվություն ունի: Շարժման ընթացքում նրանց թիմը կոտրեց մի շարք կարծրատիպեր: Հիմա կառավարման ոլորտում կարծրատիպեր կոտրելու ժամանակն է:

«Ես ապացուցելու խնդիր ունեմ ՀՀ քաղաքացուն: Շատ շուտով կարող են լինել այն խղակցությունները, որոնք մատնանշում են վարչական կառավարման փորձի պակաս, երիտասարդ տարիքի եւ այլն: Միգուցե չափազանց ինքնավստահ հնչի, սակայն ես պատրաստվում եմ կարճ ժամանակում կոտրել մտավախությունների ու կարծրատիպերի մեծ մասը: Դա կանեմ իմ ամենօրյա քրոնացան աշխատանքով, պրոֆեսիոնալ մասնագետների հետ թիմային աշխատանքով: Ես լավատեսորեն եմ տրամադրված: Մենք շատ հաճախ ենք խոսել քաղաքական սերնդափոխության մասին: Կարծում եմ՝ հիմա լավագույն ժամանակն է, որ սերնդափոխությունը տեղի ունենա: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահել է ինձ այդ պաշտոնը: Որպէս ժողովրդի թեկնածու նա չէր կարող երկար չկշռադատել մինչեւ որոշում կայացնելը», – նշում է նա ու հավաստիացնում աշխատելու է բաց եւ թափանցիկ:



Աշխարհասփյոռ սիրելի հայեր, թանկագին հայրենակիցներ

Շնորհակալ եմ, որ ժամանակ եք գտնում եւ այցելում www.mindiaspora.am կայքը տեղեկանալու համար Հայաստան-Միջուկ գործակցության զարգացմանը, ՀՀ սփյուռքի նախարարության անելիքներին եւ Միջուկի առօրյային: Հուսով եմ ինտերնետի (համացանց) բոլոր հնարավորությունները կօգտագործենք ՀՀ կառավարության կողմից Միջուկին միտված քաղաքականությանն հիմնական դրույթները ձեռնարկելու համար:

Մենք կանենք ամեն ինչ, որ կայքում տեղ գտնեն հետաքրքիր եւ կարևոր նյութեր, տեղեկություններ, կփորձենք տեղեկատվություն փոխանցել Հայաստանում եւ համայնքներում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Երախտագրություն կլինենք, եթե ձեր կողմից արվեն առաջարկություններ եւ դիտողություններ կայքում տեղ գտած նյութերի, ծրագրերի եւ տեղեկատվության վերաբերյալ:

Խնդրում ենք բարձրացնել հիմնախնդիրներ, անել հարցադրումներ ու առաջարկություններ, որոնք առնչվում են Հայաստան-Միջուկ գործակցությանը: Մենք պետք է անենք ամեն ինչ, որպէսզի նպաստենք ազգի միավորմանն ու Հայաստան-Միջուկ հարաբերությունների ջերմացմանը, համագործակցության հարցերի շուրջ ողջ հայության համախմբմանը:

Դրանք կարող են հարստացնել, գեղեցկացնել եւ առավել գրավիչ դարձնել ՀՀ սփյուռքի նախարարության կայքը, ասել է թե՛ ձեր կայքը: Վստահ եղեք, որ լավագույն առաջարկներն անարձագանք չեն մնա:

Վստահ եմ նաև, որ աշխարհի տարբեր ծայրերում կայքեր ստեղծող շատ հայ մասնագետներ իրենց ներդրումը կունենան կայքն առավել բազմաբովանդակ դարձնելու համար:

Հարգաբաժան բարեկամներ, հավատացած եմ, որ մեր կայքի խորագրերը ձեզ հնարավորություն կտան ծանոթանալու անվանի սփյուռքահայերի կյանքին ու գործունեությանը, Հայրենիք-Միջուկ գործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերին, ինչպէս նաև Միջուկում մեր հայրենակիցների խնդիրներին, կազմակերպությունների գործունեությանը:

**Միրով եւ անկեղծ ակնկալիքներով՝
ՀՀ սփյուռքի նախարար
Միխիթար ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**Ամայա ՅՈՎԱՆՆԻՍՅԱՆ
Լուսանկարը՝ Եւին ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ
www.mediamax.am**



Սիրելի Աշխարհատարած Յայեր,

2008 թ. հոկտեմբերից ես իմ համախոհներով Ձեր անմիջական աջակցության շնորհիվ ստեղծեցինք և կայացրեցինք ՀՀ սփյուռքի նախարարությունը: Հայաստանի անկախացումից հետո սփյուռքահայերի ոգևորությունը, Հայրենիքին ծառայելու ցանկությունը շատ դեպքերում ժամում էր չհամակարգված և այդ պատճառով էլ Դուք հաճախ հիասթափվում էիք, երբ չէինք կարողանում գտնել Ձեր հարցերի պատասխանները:

Սփյուռքի նախարարությունը դարձավ այն դուռը, այն կենտրոնը, որտեղ լսեցին Ձեզ, գործակցեցին Ձեզ հետ, քննարկվեցին բազում-բազում հարցեր: Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ, մշակվեցին և իրականացվեցին մեծաթիվ հայանպաստ ծրագրեր:

Տարիների ընթացքում եղա շատ համայնքներում, զգացի Ձեր ազգային ոգին, հայրենասեր տեսակը և երիտասարդությանը հայ պահելու հերոսական քայլերը ու ձգտումը: Ձեզանից ես շատ բան սովորեցի, Դուք եղաք

իմ խորհրդատուն ու աջակիցը, բարեկամս ու ընկերը:

Ավելացավ վստահությունը մեր նկատմամբ, ստեղծվեցին ամուր գործակցություն և ամուր կապեր, Սփյուռքն առավել մոտեցավ Հայրենիքին՝ շնորհիվ Հայաստանում և Սփյուռքում տքնաջան աշխատանքի:

Վստահ եմ՝ մեր ցանած սերունդը և բացած ճամփաները ու ակունքները առավել կխորանան և նոր ու առատ պտուղներ կտան:

Խորապես շնորհակալ եմ, զգացված եմ, հպարտ եմ, որ առիթ եմ ունեցել Ձեզ հետ աշխատելու, վայելելու Ձեր ջերմ ու մարդկային վերաբերմունքը: Համոզված եմ, որ նոր Հայաստանում երիտասարդական ավյունով առեցուն կառավարությունը կշարունակի սիրով և նվիրումով կերտել մեր երկրի ապագան:

Համոզված եղեք, որտեղ էլ ներդրվի իմ ծառայությունը, այն նվիրվելու է ժողովրդին և Հայրենիքիս բարօրությանը:

Միշտ Ձեր՝ մասնագիտական և մարդկային նվիրումով

Յրանուշ ՅԱՈՐԵԱՆ

10 տարի՝ հստակ առաքելությամբ ու արդյունավետ աշխատանքով

10 տարի առաջ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությունը: Համայն հայության համար այս կառույցի հիմնումը դարձավ Սփյուռքի բացառիկ նորովի վերաթևոթման և վերախմաստավորման հնարավորություն: Այլևս որոշվեց ու արձանագրվեց հայ ժողովրդի նվաճումներն ու հաղթանակները պիտի կերտենք ու պիտի տոնենք միասին, պիտի հյուսենք մեր սրտերն ու հոգիներն իրար, և երկնային խորհրդի ուժով նոր գաղափարներով ստեղծենք մեր երրորդությունը Հայաստան, Արցախ, Սփյուռք: Գնալ երազած Հայաստանի ճանապարհով չներգրավելով այնտեղ Սփյուռքի մեր հայրենակիցների ջանքերն ու ավանդը, ասել է՝ թե երկարաձգել հաղթական տապանին հասնելու ժամանակն ու տարածությունը: Ահա այս գիտակցությամբ ու առաքելությամբ ստեղծվեց Սփյուռքի նախարարությունը, ու այսօր ամփոփելով տասնամյա պատմությունը կարող ենք ասել՝ արդարացված գոյություն, տքնաջան աշխատանք Հայաստանում և Սփյուռքում, ամուր գործակցություն և հզոր կապեր: Հայրենիքում յուրաքանչյուր սփյուռքահայի տունը դարձած այս կառույցը, որ շունչ ու կյանք է ստանում իր բանիմաց աշխատակիցներով, ամեն օր գալիս է ասելու. այո, Հայաստանը բոլորովի այլ է առանց Սփյուռքի և միանգամայն այլ, ավելի պայծառ, ուժեղ, երիտասարդ ու խելացի իր Սփյուռքով:

Ամեն օր յուրաքանչյուր սփյուռքահային դիմավորելիս այստեղ կարելի է լսել հետևյալ խոսքերը. «Բարո՛վ էք եկել Ձեր տուն»: Բսկ տասը տարի շարունակ տուն-նախարարությունում այս բառերը, անկասկած, ամենից հաճախ ասել է կառույցի հիմնադիրներից ու նվիրյալներից մեկն ու առաջինը Յրանուշ Հակոբյանը:

– Տիկին Յակոբյան, ասում են՝ Սփյուռքը Հայաստանի շունչն է ամբողջ աշխարհում, իսկ



Յայրենիքն էլ Սփյուռքի զգայուն, մեծ, առողջ սիրտն է: Սփյուռքի նախարարության շնորհիվ սիրտն ու ոգին նորովի կապվեցին իրար: Մի պահ հետ նայելով՝ ի՞նչ կարող էք արձանագրել հիմա՝ նախարարության ստեղծումից մեկ տասնամյակ հետո: Ինչպե՞ս դվեցին նախարարության առաջին «քարերն», ու ի՞նչ սկզբունք որդեգրվեց հետագա աշխատանքի համար:

– Այո, 2008 թվականից մինչ այսօր Հայաստան-Սփյուռք գործակցության նոր փուլ արձանագրվեց ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումով, Հանրապետության երրորդ նախագահի որոշմամբ: Սփյուռքի նախարարությունը մշակեց Հայկական սփյուռքի նկատմամբ Հայաստանի պետական քաղաքականությունը, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ և ռազմավարական ծրագիր, որոնք հաջողությամբ իրագործվում են Սփյուռքի համապատասխան կառույցների և կազմակերպությունների աջակցությամբ, մասնակցության և համախմբման արդյունքում: Առանց Սփյուռքի կառույցների համաձայնության և գործակցության անհնար կլինեին նախարարության գործունեությունն ու նոր ծրագրերի իրականացումը: Ինչպես ընդունված է ասել ծափ տալու համար երկու ձեռք է պետք: Այսօր բոլորովի նոր որակ, նոր ձևեր և մոտեցումներ է որդեգրել Հայաստան-

Սփյուռք գործակցությունը:

Նախարարությունն ի սկզբանե իր առջև դրեց երեք ռազմավարական խնդիր: Առաջինն նպատակն էր հայապահպանությանը Սփյուռքում, մշակել հատուկ ծրագրեր հայ ինքնության պահպանման, Սփյուռքի ուժացման դեմ պայքարին օժանդակելու համար, երկրորդ բացահայտել և համախմբել Սփյուռքի ներուժը և օգտագործել Հայաստանի տնտեսության զարգացման համար և երրորդ՝ մշակել ծրագրեր, որոնք կարող են խթանել հայրենադարձությունը: Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը գլխավորապես հիմնված է գործընկերային հարաբերությունների կառուցման և զարգացման, փոխադարձ վստահության և փոխըմբռնման վրա, ինչն իրականացվում է երկխոսության, փոխադարձ հարգանքի, փոխզիջումների և փոխհամաձայնության ճանապարհով զարգացման նոր հետևանքների ուղենշմամբ:

Մեր խնդիրը դարձավ Սփյուռքի հետ աշխատանքները կազմակերպել «Ճանաչել, վստահել և գործակցել» սկզբունքով: Սփյուռքյան շատ կառույցներ տարիների փորձից զիտեն, որ եթե ցանկություն ունի որևէ նախաձեռնություն իրականություն դարձնել, ապա կարող է դիմել մեր նախարարություն և ստանալ համապատասխան աջակցություն:

Մյուս ակնհայտ ձեռքբերումն արտացոլվում է լրատվության մեջ, որում մշտապես առկա է Սփյուռքի թեման: Եթե նախկինում շաբաթը մեկ անգամ էր Սփյուռքը հիշատակվում հայաստանյան լրատվության մեջ, ապա այժմ չկա այդպիսի օր, որ չիտվի Սփյուռքի մասին: Դրան նպաստող ամենակարևոր հանգամանքը հայաստանյան ծրագրերում սփյուռքյան քաղաքիչի առկայությունն է, այսինքն՝

120

դրանք համահայկական են դարձել, ինչը նշանակում է Սփյուռքի հավերժ ներկայությունը Հայաստանում: Սփյուռքը և Հայաստանն այսօր ուժ են ստանում իրարից: Այդ ուժն ակներև դարձավ Ապրիլյան քառօրյայի ընթացքում, և բոլորն իմացան, որ Արցախը նաև Սփյուռքի Հայրենիքն է, և Սփյուռքը պատրաստակամ է պայքարելու Արցախի պաշտպանության համար:

Մեր նախարարության նպատակը հայապահպանությունն է, մայրենիի պահպանությունը, Հայրենիքի ճանաչողությունն ու Սփյուռքի ներուժի օգտագործումը՝ ինչպես Հայաստանի և Արցախի հզորացման ու համահայկական օրակարգային խնդիրների լուծման: Տարիների ընթացքում Սփյուռքում քննություն են բռնել տասնյակ ծրագրեր՝ «Արի տուն», «Սփյուռք» ամառային դրպրոց, «Իմ Հայաստան» համահայկական փառատոն, «Մեր մեծերը», համահայկական մասնագիտական ու Հայրենիք-Սփյուռք համաժողովները, մրցույթները, մրցանակաբաշխությունները և այլն:

– Տիկին Հակոբյան, մենք ամառ «Արի տուն» ծրագրի հայրուրավոր ամսնակիցներին հաճախ կարելի է տեսնել Երևանում քայլելիս: Նրանք հպարտորեն կրում են «Արի տուն» գրությամբ շապիկներն ու վայելում Հայրենիքի արևը: Դուք նրանց տուն եք բերում, սովորեցնում մայրենին, կապում իրար, հնարավորություն տալիս ճանաչել Հայաստանն ու գիտակցել, որ անգամ մեր արևն է ուրիշ, ու մեր սերը, միասնությունը, հավատը կարող են փոխել անգամ երկրագնդի ուղեծիրը: Ինչպե՞ս հաջողվեց Ձեզ նախաձեռնել, չեմ տարակուսի ասել, հայրենաճանաչության ամենալավ երիտասարդական ծրագիրը:

– «Արի տուն» ծրագիրը այս տարի տոնում է իր տասնամյակը: Կարծում եմ՝ սա խոստն փաստ է: Իհարկե, չեմ կարող չնշել, որ ծրագիրն իր տեսակի մեջ յուրահատուկ է: Նախևառաջ Հայաստան այցելած պատանիները 9 օր շարունակ ապրում են հայկական ընտանիքներում, սովորում հայկական նիստուկացր, բարեկամանում ու այսպիսով նաև կապվում Հայրենիքին: Իսկ ահա ճամբարային 5 օրերի ընթացքում ծրագրի մասնակիցներն ավելի լավ են ճանաչում միմյանց, ընկերանում, ստեղծում մեծ համահայկական երիտասարդական ցանց: 2014 թվականից սկսած՝ ծրագրի մասնակիցների համար, մինչև հայաստանյան պատմամշակութային վայրեր այցելելը, կազմակերպվում են հայոց լեզվի ուսուցման դասընթացներ: Կարևոր ու պարտավորեցնող է, երբ երեխաներն իրենց առավոտները սկսում են մայրենիի դասով, որ միաժամանակ դառնում է նաև հայրենասիրության ու հայկականության դաս:

Յուրաքանչյուր տարի մեծանում է այս ծրագրի շրջանակներում Հայաստան այցելել ցանկացողների թիվը: 2009-2017 թվականների ընթացքում ծրագրին մասնակցել է շուրջ 8000 պատանի և աղջիկ: Ասել է թե՛ 16000 ընտանիք բարեկամացել է, ընկերացել, և այդ կապերը գնալով խորանում են:

«Արի տուն» ծրագիրը կարծես խորհրդադաճում է Հայրենիք-Սփյուռք գործակցության ողջ գաղափարախոսությունը՝ նպաստել աշխարհասփյուռ հայերի ազգային ինքնության պահպանմանը, ամրապնդել Հայրենիքի հետ կապն ու հող նախապատրաստել հայրենադարձության համար: Տպավորիչ և անմոռաց են երեխաների համար շփոթները երկրի ղեկա-

վարության և արվեստի գործիչների հետ: Նրանք գնում են հայրենիքից անպայման վերադառնալու պայմանով, Հայաստանի նկատմամբ սերն իրենց սրտում տանելով: Մենք ցանկե՛նք սերմեր, որոնք ապագայում կծլարձակեն և խոր արմատներ կգցեն:

– Տիկին Հակոբյան, 2012 թվականից ամեն ամառ Երևանի պետական համալսարանի շուրջ դառնում է «Սփյուռք» ամառային դպրոցը: Ստեղծ են համալսարան ու զարմանում՝ մի կողմում հայկական ազգային երգն ու պարն է, մյուս կողմում սփյուռքահայ երիտասարդ առաջնորդներ են նոր ծրագրեր մշակում, մեկ այլ կողմում Սփյուռքը հայ պահող խոհեմ ուսուցիչն է վերապատրաստվում, և ի վերջո ամենամեծ հրաշքը՝ մեկ ամառում արագացված դասընթացի շնորհիվ հայ պատանին սովորում է աստվածային մայրենին: Ո՞րն է ծրագրի հաջողության բանաձևը:

– Բացի Լիբանանում հաջողությամբ գործող Հայկազյան համալսարանից Սփյուռքում չկար որևէ կրթական հաստատություն ուսուցիչ պատրաստելու կամ վերապատրաստելու համար: Ուստի հրամայական էր նման կառույցի ստեղծումը, որն էլ դարձավ «Սփյուռք» ամառային դպրոցը: Ամառային դպրոց-ծրագրի շրջանակներում իրականացվում է Սփյուռքի մասնագետների պատրաստում և վերապատրաստում 5 ուղղություններով՝ հայոց լեզվի (արևելահայերեն և արևմտահայերեն) արագացված դասընթացներ, Սփյուռքի հայկական կրթօջախների ուսուցիչների և կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում, լրագրողների ամառային դպրոց, երիտասարդ առաջնորդներ և համայնքային գործի կազմակերպիչների վերապատրաստման ամառային դպրոց, ազգային երգի, խմբավարների և պարի ուսուցիչների վերապատրաստման դասընթաց: Ինչպես նկատեցիք, ամառային դպրոցն ընդգրկում ու հագեցած է, և ես շատ ուրախ եմ, որ նախարարության հայրենաճանաչության, մշակութային ծրագրերի կողքին իրենց տարածվածությամբ և մասնակիցների թվով չեն զիջում նաև գիտակրթական ծրագրերը:

«Սփյուռք» ամառային դպրոցի առաքելությունը շատ պարզ է՝ Հայրենիք-Սփյուռք հուսալի և արդյունավետ կամուրջների ստեղծումն ու ամրապնդումը, հայոց լեզվի իմացության ու կիրառման խրախուսումը, կրթական, մշակութային ծրագրերի և հայագիտական օջախների գործունեությանը օժանդակումը, համայնքներում առկա ներուժի հաշվառումն ու համախմբումը, համահայկական ծրագրերում նրանց ներգրավմանն աջակցությունը:

2012 թվականից իրականացվող ծրագրին արդեն մասնակցել է 1200-ից ավելի սփյուռքահայ աշխարհի ավելի քան 40 երկրից: Նրանցից յուրաքանչյուրն իր հետ տարել է ոչ միայն նոր գիտելիքներ, գաղափարներ, այլև ուժ է առել Հայրենիքից, տեսել այն փոփոխությունները, որոնք առկա են, և գնացել է մի օր նորից վերադառնալու երազանքով:

– Չեմ կարող չնշել, որ նախարարության բոլոր ծրագրերը հետաքրքիր անվանումներ ունեն. և՛ համահունչ են իրենց բովանդակությանը, և՛ գեղեցիկ են: Հայապահպանությանը, Սփյուռքում հայ ինքնության պահպանմանը, Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդմանը միտված մեծ ծրագրեր են նաև «Իմ Հայաստան» և «Երգում եմ Կոմիտաս» փառատոնները, «Մեր մեծերը» ամենամյա շարքը: Արդյո՞ք նույնչափ

տարածում ու ընդգրկում մասնակցություն են ունենում այս ծրագրերը Սփյուռքում:

– Սփյուռքում հայ մշակույթի տարածումն ու պահպանումը ժամանակի մարտահրավերներն են դարձել: Այսօր հաճախ են խոսում համաշխարհայնացման ու ցանցավորման մասին, այս ամենը դիտարկում լավ ու վատ կողմերից: Ինչ խոսք, ժամանակն առաջ է գնում, ու մենք պարտավոր ենք հաշվի նստել դարի մարտահրավերների հետ: Ահա այդ գիտակցմամբ էլ նախարարությունը դարձավ Սփյուռքում հայապահպանության հիմնական առաջամարտիկներից մեկը:

Հայ մշակույթի պահպանմանը նպաստող կարևոր ծրագրերից է հատկապես «Իմ Հայաստան» համահայկական մշակութային փառատոնը, որն անցկացվում է 2 տարին մեկ: Փառատոնի նպատակն է Հայաստան-Սփյուռք-Արցախ մշակութային գործակցության խթանումը և զարգացումը, մշակույթի միջոցով ազգային ինքնության պահպանումը, զրոսաշրջության խթանումը, Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք մշակութային կապերի և համագործակցության ընդլայնումը, նոր գեղարվեստական համայնքների և տաղանդավոր անհատ կատարողների հայտնաբերումը: Փառատոնն իրոք վերածվում է համահայկական տոնախմբության ու տոնում է գրեթե երկու ամսից ավելի: Պարավետի օրեր, ասմուքի համահայկական փառատոն, երգչախմբային արվեստի օրեր, դուդուկի և հայկական նվագարանների փառատոն, հայ երգի օր. ահա այսպես հայաստանցի, արցախցի ու սփյուռքահայ պատանիները, արվեստագետներն ու երաժիշտներն արվեստի լեզվով մեկ անգամ ևս մասնակիցն ու վկան են դառնում ազգային համախմբվածության և միասնականության:

2012 թվականից սկսած փառատոնին մասնակցել են շուրջ 4000 հոգի (մոտ 110 պարախումբ, 30 երգչախումբ, 50-ից ավելի երաժիշտ, 70 անհատ կատարող և այլն): 2018 թ. իրականացվող փառատոնին ակնկալվում է ավելի քան 2000 մասնակից:

Այս մշակութային հրավանդությունը նախևառաջ հայապահպանության, Հայրենիքը ճանաչելու, հայկական մշակույթն ըմբռնելու մեծագույն հարթակ է:

Մշակութային նորույթ էր «Երգում եմ Կոմիտաս» փառատոնի կազմակերպումը, որի բուն նպատակն է Մեծն Կոմիտասի երգն ու երաժշտությունը, անգնահատելի ժառանգությունը Սփյուռքի սեփականությունը դարձնելը: Այն նպատակում է նաև օտարների շրջանում կոմիտասային արվեստի հանրահռչակմանը, բազմաշնորհ հանձարի անցած ուղու նորովի արժևորմանը, նոր լույսի ներքո եղեռնը վերապրած արվեստագետի կերպարի ճանաչմանը, Սփյուռքում հայ մշակույթի և մշակութային ինքնության պահպանմանը, Հայրենիքի հետ կապերի ամրացմանն ու զարգացմանը, մշակութային կապերի խորացմանը:

2013 թվականից ամեն տարի կազմակերպվող «Կոմիտաս վարդապետ» և «Երգում եմ Կոմիտաս» համահայկական փառատոններին մասնակցել է շուրջ 1000 սփյուռքահայ: Նրանք երգել ու ապրել են Կոմիտասով հավատալով, որ նրա մաքրամաքուր հնչյունները կմաքեն նաև ունկնդիրների հոգիները, կտարածվեն աշխարհով մեկ ու կդառնան համաշխարհային ժառանգություն: Ողջունելի է հատկապես այն փաստը, որ փառատոնների շրջանակներում կազ-

130

մակերպվում են համերգաշարեր ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի Հանրապետության մարզերում, Արցախում:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ իր տաղանդավոր զավակների շնորհիվ լուրջ ներդրում է ունեցել համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում: Անուրանալի է գիտության, ավիաշինության, միջուկային ֆիզիկայի, մաթեմատիկայի, բժշկության, արվեստի, գրականության, երաժշտության և սպորտի բնագավառներում հայ անվանիների ներդրումը: Նրանցից շատերը դարձել են համամարդկային արժեք և իրենց մասնունդը գրավել համաշխարհային մեծերի անդամատանում: Ահա թե ինչու մեր տաղանդավոր հայորդիների սփյուռքահայ երիտասարդներին ճանաչելի դարձնելու նպատակով 2009 թվականից սկիզբ դրվեց «Մեր մեծերը» ծրագրին, որը լուսաբանում է մեծանուն հայերի կյանքն ու գործունեությունը: Յուրաքանչյուր տարի գիտության, արվեստի, գրականության, հոգևոր, քաղաքական, տնտեսական ոլորտներից 4-5 հայտնի անուններ ներկայացնելով նպատակ ունի հատկապես երիտասարդության շրջանում նրանց ճանաչմանը և օգնում, որ նրանք արժանապատիվ ու հպարտ հայ մեծանան:

Ծրագրի շրջանակներում Սփյուռքի կրթամշակութային օջախներում, ինչպես նաև հայաստանյան բուհերում և դպրոցներում կազմակերպվում են մեծարման միջոցառումներ, շարադրությունների մրցույթներ, հրատարակվում են գրքույկներ, պատրաստվում խտասալիկներ և այլն: Եթե ամփոփենք, ապա 2009-2018 թթ. ընթացքում ՀՀ բուհերում և դպրոցներում, ինչպես նաև Արցախի, Սփյուռքի կրթամշակութային օջախներում իրականացվել են և շարունակվում են իրականացվել 60 մեծի բարերարների, հոգևորականների, գրողների, նկարիչների, հերոսների, երաժիշտների, հայկական կառույցների նվիրված 273 միջոցառում՝ համաժողովների, պոեզիայի տոների, շարադրությունների մրցույթների, համերգների, բաց դասեր, հրատարակվել և թողարկվել են 17 գրքույկ ու խտասալիկ:

Հայրապետյան պիտի նշեմ, որ 2018 թվականին ծրագրի շրջանակներում կիրականացվեն միջոցառումներ նվիրված մեծագույն բարերար Միքայել Արամյանցին, հայտնի երգիծաբան Հակոբ Պարոնյանին, աշխարհի ամենահամարձակ հայտնի Ջալել Եսայանին, հայ բեմի վարպետ Վահրամ Փափազյանին, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրներին և հետոսներին:

– Այս տարի «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխության 2017 թվականի արդյունքների ամփոփման իրենց դիպլոմները ստանալու էին եկել մասնակիցները աշխարհի տարբեր ծայրերից: Սա ինքնին ծրագրի գլահատականներից մեկն է: Ի՞նչ առաքելություն է դրվել ի սկզբանե այս ծրագրի հիմքում:

– Ամենամյա այս մրցանակաբաշխության հիմքում մենք դրեցինք մի քանի նպատակ՝ իրավասել Սփյուռքում հայապահպանության, հայ ազգային ինքնության պահպանման ու զարգացման գործում հայկական կառույցների, կրթամշակութային հաստատությունների, երիտասարդական կազմակերպությունների, առանձին անհատների ունեցած ներդրումը, գնահատել և արժևորել

այս ուղղությամբ հայկական համայնքների գործունեությունը: Այս նպատակների իրագործմանը մենք ակնհայտ ենք լինում ամեն տարի, երբ տեսնում ենք մասնակիցների հուզմունքը, ոգևորությունը, սպասումը: Մրցանակաբաշխության անվանակարգերը մշտապես փոփոխվում են «Մայրենիի պաշտպան», «Լավագույն հայկական կրթօջախ», «Լավագույն լրատվամիջոց», «Լավագույն երիտասարդական կազմակերպություն», «Լավագույն հայկական համայնք», «Լավագույն գեղարվեստական խումբ», «Ավանդական հայկական ընտանիք», «Լավագույն երիտասարդական, ուսանողական հետազոտություն», մանկապատանեկան ստեղծագործությունների թեմատիկ մրցույթներ:

2010-2017 թթ.-ին «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխությունն ունեցել է 1262 մասնակից 55 երկրներից: Այդ մասնակիցների հետ կապն այսօր էլ պահպանվում է, նրանք դարձել են մեր լավ ընկերներն ու բարեկամները, մեր դեսպանները Սփյուռքում: Այս տարի մրցանակաբաշխությանը մասնակցել են 285 անհատ և կազմակերպություն աշխարհի 24 երկրներից: Ապրիլի 21-ին, երբ 2017 թվականի մրցանակաբաշխության դիպլոմների հանձնման արարողությունն էր, մենք ակնհայտ եղանք, թե ինչպես են իրենց մրցանակները ստանալու եկել բազում հեռավոր երկրների մեր հայրենակիցները, ինչպիսի հպարտությամբ և ոգևորությամբ էին նրանք ստանում դիպլոմները: Նրանք այդ կերպ Հայրենիքի նկատմամբ սերն են արտահայտում, Հայաստանն են ընկալում, կարծես թե մեկ անգամ ևս հաստատում են իրենց հայ լինելը: Նրանք փորձում են հայ մալ, հայ ապրել, իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել երիտասարդներին, պահպանել հայ արմատը, լեզուն և ինքնությունը: Անչափ հպարտանում են, երբ տարբեր երկրների հայ համայնքներ կատարած աշխատանքային այցերի ընթացքում համայնքային կառույցներում, դպրոցներում տեսնում են պատին փակցված մրցանակաբաշխության հաղթողների դիպլոմները, ինչը նրանք մեծ ոգևորությամբ են պահում:

– *Տիկին Ֆակոբյան, Սփյուռքում մենք ունենք 1000-ից ավելի կրթօջախներ: Սակայն էլ ի՞նչ դպրոց առանց հայալեզու գրականության, նոր հրատարակված գրքերի ու ձեռնարկների: Այս նպատակով նախարարությունը իրականացնում է համայնքային դպրոցները դասագրքերով ապահովման ծրագիրը: Բանի՞ գիրք է առաքվել համայնքներին, ինչպիսի՞ն էր վիճակը մինչև նախարարության ստեղծումը: Խնդրում եմ անդրադարձեք նաև նախարարության հետազոտությունների ծրագրին:*

– Բնձ համար ավելի ուրախալի լուր, քան նոր դպրոցի հիմնադրումն է, չկա: Առավել ոգևորիչ է, երբ կրթօջախ է բացվում Սփյուռքում, որտեղ մեր հայրենակիցներն ամեն օր պայքարում են իրենց ինքնության պահպանման համար: Հայկական սփյուռքում դպրոցը դառնում է և Հայրենիքի մի մասը, և հայապահպանության կենտրոն: Ահա այս ամենի գիտակցմամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացնում ենք Սփյուռքի կրթօջախներին ուսումնական, մեթոդական գրականության, ուսումնաօժանդակ նյութերի տրամադրման, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, հայոց լեզվի համա-

հայկական օլիմպիադաների, հայագիտական գիտելիքների մրցույթների կազմակերպման պետական ծրագրերը: Նպատակն է Սփյուռքում գործող ամենօրյա և մեկօրյա դպրոցներին, կրթամշակութային այլ հաստատություններին անհրաժեշտ և օգտակար ուսումնական, մեթոդական գրականության, ուսումնաօժանդակ, այդ թվում՝ էլեկտրոնային նյութերով ապահովումը: Այս տարիներին 500 հազարից ավելի գիրք է առաքվել Սփյուռք, իսկ վերջին երեք տարիներին 150 000, այն դեպքում, երբ մինչև նախարարության ստեղծումը առաքված գրականությունը 10 հազար կտորից ավելի չի եղել: Բնարկե, սա ակնառու փաստ է, սակայն պիտի շարունակենք այս գործը, և Սփյուռքի մեր դպրոցները պիտի չունենան հայալեզու ուսումնական, գեղարվեստական գրականության պակաս:

Այդ նատակով նաև պատրաստվեցին արևմտահայերենի Սյբեմարան և Ընթերցարան դասագրքերը, սփյուռքյան մասնագետների մասնակցությամբ ստեղծվեցին «Արևմտահայերենի քերականության» առաջին և երկրորդ ձեռնարկները:

Մեր գործունեության առաջին իսկ օրից մենք սկսեցինք հետազոտել հայկական սփյուռքը, համայնքները, նրանց արդի վիճակն ու մարտահրավերները: Սփյուռքի բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրները գիտականորեն վեր հանելու, վերլուծելու, դժվարությունների մեջ հայտնված համայնքային կյանքը լուսաբանելու, համայնքների պատմությունը գրի առնելու նպատակով Սփյուռքի նախարարության կողմից պարբերաբար տրվում են թեմատիկ հետազոտությունների պատվերներ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության, արևելագիտության, գրականության, լեզվի, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, ազգագրության և հնագիտության ինստիտուտներին, Երևանի պետական համալսարանին, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանին, «Վերադարձ Հայաստան» հիմնադրամին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբեր» հետազոտական կենտրոնին, Բեյրութի Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնին և գիտական այլ հաստատություններին: 2009-2017 թվականներին կատարվել է 104 նմանատիպ հետազոտություն: Ի դեպ, մեր առաջարկվել է, որ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 6 ինստիտուտներում բացվել են սփյուռքի բաժիններ:

– *Համազգային յուրահատուկ հավաքներ են Հայաստան-Սփյուռք համաժողովները: Թույլ տվե՞ք ասել, որ դրանցից յուրաքանչյուրը քննարկումների մեծ հարթակ, համահայկական հարցերի խոսափող, նոր գաղափարների շտեմարան լինելուց զատ դառնում են նաև հետաքրքիր, յուրօրինակ համահայկական տոներ: Այո՞, տոն է, երբ հանդիպում, իրար ճանաչում ու կապ են հաստատում հայերը Ավստրալիայից ու Արգենտինայից, Չինաստանից ու Լիբանանից, Եվրոպայից և Լատինական Ամերիկայից: Տիկին Ֆակոբյան, նախարարության ստեղծումից հետո համահայկական 3 համաժողովներն ամփոփելով՝ ի՞նչ արդյունքներ կարող ենք արձանագրել:*

– Նախարարության հիմնադրումից հետո մենք անցկացրել ենք Հայաստան-Սփյուռք

140

3 խոշոր համահայկական համաժողովներ 2011, 2014 և 2017 թվականներին: 2017 թվականի սեպտեմբերի 18-20-ը Երևանում կայացավ «Փոխադարձ վրստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք վեցերորդ համահայկական համաժողովը, որն իր աշխարհագրությամբ, մասնակիցների թվով և բարձրագրած հարցերի արդիականությամբ իրոք աննախադեպ իրադարձություն էր: Ի տարբերություն մյուս համաժողովների 6-րդ համաժողովը ուներ մի շարք առանձնահատկություններ: Առաջին անգամ համաժողովի 4 գլխավոր ուղղությունների անցկացման և կազմակերպման համար ընտրվել էին պատասխանատու գերատեսչություններ՝ Սփյուռքի, Պաշտպանության, Արտաքին գործերի և Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունները: Համաժողովի մեկ այլ առանձնահատկությունը կլոր սեղան-քննարկումների անցնկացումն էր: Այդ օրերին ներկայացվեցին նաև Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի, ինչպես նաև Էրեբունի-Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների նախնական ծրագրերը:

Չեմ կարող դարձյալ չնշել, որ համաժողովը առանձնացավ նաև մասնակիցների թվով 1827 հոգի, և աշխարհագրությամբ 71 երկիր: Մյուս կողմից, առաջին անգամ համաժողովի ընթացքում հայտարարվեց հաջորդ համաժողովի օրակարգը, որը նվիրվելու է հայադարձության թեմային: Պետք է փաստել, որ համահայկական հերթական այս հավաքն ամենամեծ հարթակն էր ի մի բերելու և ամփոփելու Հայաստան-Սփյուռք գործակցության ձեռքբերումները, նախանշելու հայության առջև ծառացած մարտահրավերները և ապագային միտված անելիքները: Համաժողովը միակն է իր տեսակի մեջ որպես Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնության իրական համախմբման և հայության ուժի ցուցադրման աննախադեպ հարթակ:

– **Տիկին Յակոբյան, բազմիցս եմ ականատես եղել, թե ինչպիսի յուրահատուկ ջերմությամբ եք գովաբանում, գնահատում, փայփայում մեր սիրիահայ հայրենակիցներին: Դա՞նախ եք ասում, որ մենք՝ Հայաստանցիներս, որանցից պիտի շատ ու շատ հարցերում սրիակ վերցնենք: Սփյուռքի նախարարությունը մեծ պատասխանատվությամբ զբաղվում է սիրիահայերի խնդիրներով, օգնում, դառնում նրանց աջակից ու հավատարիմ ընկերը Դայաստանում:**

– Իհարկե, այսօր էլ Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության հիմնական նպատակն է սիրիական հակամարտության արդյունքում Հայաստանում հաստատված սիրիահայերին սահուն կերպով ինտեգրել հայաստանյան կյանքին: Գլխավորը նրանք դառնան ՀՀ քաղաքացիներ և Հայրենիքում չունենան փախստական կարգավիճակ: Այդ նպատակով սիրիահայերին պարզեցված կարգով շնորհվում է քաղաքացիություն, ինչի արդյունքում Հայաստանում ապաստան գտած շուրջ 22 հազար սիրիահայերից այսօր արդեն 19 հազար 800-ը դարձել է ՀՀ քաղաքացի, 1500-ը ստացել կացության կարգավիճակ և միայն 700-ին է

տրվել փախստականի կարգավիճակ: Մեզ հաջողվել է նրանց ինտեգրել ՀՀ կրթական, մշակութային, տնտեսական, առողջապահական և այլ ոլորտներում:

Ուրախալի է, որ սիրիահայերն այսօր Հայաստանում իրենց լավ են զգում: Նրանք ստեղծող, արարող մարդիկ են, ովքեր իրենց աշխատանքային մշակույթն են ներդրել մեզանում, ընդգրկվել են տարբեր ոլորտներում, ստեղծել իրենց բիզնես ծրագրերը և հաջողությամբ զարգացնում են դրանք:

Հայաստանը նաև Հալեպում է սիրիահայերին և սիրիացիներին աջակցություն ցուցաբերել իրականացնելով մի շարք ծրագրեր. մի քանի օդանավով մեծ քանակությամբ օգնություն է հասցվել Սիրիա:

Դեռևս շարունակվում է սիրիահայերի հոսքը Հայաստան, ամեն օր մեզ այցելում է 20-30 սիրիահայ: Մեր նախարարությունում գործում է աշխատանքային կումբ, միջգերատեսչական հանձնաժողով իմ գլխավորությամբ, որի մասնակիցն են ՀՀ բոլոր նախարարությունները ներկայացնող փոխնախարարները: Հանձնաժողովում քննարկվում և լուծուժներ են տրվում սիրիահայերի հիմնախնդիրներին:

– **Տիկին Յակոբյան, Սփյուռքի նախարարության առաքելություններից մեկն էլ ազգային ներուժի համախմբումն է: Բան՞ համահայկական մասնագիտական ընկերակցություն կա այսօր, և ինչպե՞ս է նախարարությունն աշխատում նրանց հետ:**

– Սփյուռքը կա, գործում է, նրա տրոփյուն սիրտն են մեր ավանդական կառույցները և նրանց կից քույր կառույցները, ՀԲԸՄ-ը, մարզական, կանանց, երիտասարդական բազում կառույցներ: Առանձնապես պետք է ընդգծել հայ եկեղեցու դերակատարությունը ազգային խնդիրների լուծման, հայ ինքնության հզորացման գործում: Մենք հաստատուն կապեր ենք ստեղծել նրանց հետ: Շատերի հետ կնքել ենք գործընկերության համաձայնագրեր, հուշագրեր, կազմակերպել բազմաբովանդակ ձեռնարկներ: Ես երախտապարտ եմ մեր սփյուռքյան կառույցներին, որոնց օգնությամբ էլ ոչ միայն կայացավ, այլև ընդունելի դարձավ նախարարությունը, հաստատվեցին գործընկերային հարաբերություններ: Սակայն մենք սփյուռքի օգնությամբ նորը, առաջադեմը Հայաստան բերելու համատեղ ծրագրեր կազմելու համար նպատակահարմար գտանք նաև մասնագետներին համախմբել, մասնագիտական ցանցեր ստեղծել:

Այսօր նաև մեր աջակցությամբ գործում են ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ասոցիացիան, Լրատվամիջոցների, Ֆինանսիստների և բանկիրների համահայկական ընկերակցությունները, Իրավաբանների համահայկական խորհրդաժողովը, «Հայկական առևտրային ցանց» (ՀԱՅ) կազմակերպությունը, «Ալցիա առողջություն» Հայաստան-Ֆրանսիա կազմակերպությունը, աշխարհի հայ նկարիչների, հայ գրողների միությունները, Հայ բժիշկների միջազգային, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեները, Հայ ոսկերիչների ասոցիացիան, համահայկական կրթական խորհրդաժողովը և այլն: Մինչ այժմ անցկացվել են համահայկական մասնագիտական մոտ 100 համաժողով, որոնց ընթացքում ստեղծվել են նոր ցանցեր, կյանքի են կոչվել հավակնոտ գաղափարներ, խորացվել է հատկապես Սփյուռք-Սփյուռք կապը:

Իսկ ամենակարևորը՝ նախարարություն-

նում ստեղծվել է մասնագետների, փորձ ունեցող մարդկանց մի կոլեկտիվ, որը ճանաչում է բազմաշերտ, հետաքրքիր, պահանջկոտ Հայկական Սփյուռքին և կարողանում է արդյունավետ աշխատել նրա հետ: Ես երջանիկ եմ, որ հնարավորություն և բախտ եմ ունեցել աշխատել իմ ազգի տարբեր հատվածների հետ, սովորել նրանցից, գործակցել նրանց հետ և փորձել միշտ բարձր պահել Հայի, Հայության և Հայաստանի պատիվը:

– **Տիկին Յակոբյան, այսօր Սփյուռքում հազարավոր հայրորդներ սպասում են նախարարության ամառային ծրագրերի մեկնարկին, արդեն լրացրել են մասնակցության հայտերը, և նրանցից շատերը Հայրենիքը ծանաչելու, ընկալելու ու մտապահելու են հենց Սփյուռքի նախարարության տարբեր ծրագրերի միջոցով: Ի՞նչ է խոստանում 2018-ի ամառը: Խոսե՞նք մի փոքր անելիքների մասին:**

– Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես նախարարության բոլոր ծրագրերը կյանքի կոչվեն: Ընդհանրապես մենք մեր գործունեության հիմքում դրել ենք արդյունավետության և տրամաբանված շարունակականության գաղափարը: Այս ծրագրերի իրականացումն ինքնանպատակ չէ, սա Սփյուռքի պահանջն ու հրամայականն է: Ահա այսպես են ստեղծվել ու կազմակերպվել «Արի տուն», «Սփյուռք» ամառային դպրոց ծրագրերը, մեր փառատոներն ու խորհրդաժողովները, մեր ցանակաբաշխությունները, հրատարակությունները, և ի վերջո Հայաստան-Սփյուռք համաժողովները: Ուրախ եմ, որ այս տարի ևս նախարարության ամառը հազեցած և ծանրաբեռնված է լինելու: Միայն մեկ փաստ նշեմ. «Իմ Հայաստան» փառատոնն ունենալու է 1000-ից ավելի մասնակից: Այսօր Կառավարությունում են արդեն Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների և Արևմտահայերենի պահպանման, զարգացման և կանոնարկման ռազմավարությունները, մշակվում է հայրենադարձության գործընթացի խթանման և կազմակերպման ռազմավարությունը:

Այսինքն նախարարությունը հավատարիմ է իր որդեգրած սկզբունքներին, աշխատում է համուն Հայաստանի, Սփյուռքի ու Արցախի բարօրության: Այլ կերպ լինել չէր կարող, որովհետև այս չափանիշները մենք մեր առաջ դրեցինք նախարարության հիմնադրման առաջին իսկ օրվանից: Ես լիահույս եմ, որ այդպես է լինելու նաև հետագայում:

– **Տիկին Յակոբյան, իշխանափոխության ներկա պայմաններում, երբ Կառավարության նոր կազմ է ձևավորվում, խոսակցություններ են գնում 33 սփյուռքի նախարարության անհրաժեշտության մասին: Խնդրում եմ Ձեր կարծիքը հարկ վերաբերյալ:**

– Նախ, ցանկանում եմ ընդգծել, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը ստեղծվել է Սփյուռքի պահանջով: Այդ մասին հնչել է Հայաստան-Սփյուռք մի քանի համաժողովների ընթացքում: Նախարարության ստեղծումը համընկավ Հայաստանի և Սփյուռքի համար իրավական, քաղաքական բարդ ժամանակահատվածի հետ, երբ տեղի էին ունեցել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունները, ինչպես նաև ստորա-

150

գրվել էին Հայ-թուրքական արձանագրությունները, ինչի հետևանքով Միությունի ստվար հատվածը երես էր դարձրել Հայաստանից, չկար վստահություն, և դժվար էր գտնել համագործակցության եզրեր: Ահա այս ծանր պայմաններում մի կողմից մեր թիմով 0-ից պետական կառավարման նոր ինստիտուտ էինք ստեղծում, իսկ մյուս կողմից մասնագետներ էինք պատրաստում և փորձում երկխոսել ու գործակցել Միությունի հետ:

Հետահայաց գնահատելով՝ կարող եմ ասել, որ մեզ հաջողվեց 827 համայնքների և հարյուրավոր կազմակերպությունների ու կառույցների հետ աշխատել, ծրագրեր իրականացնել: Բոլոր ձեռնարկները նպատակաուղղվել են հայրենաճանաչությանը, հայապահպանությանը, Հայրենիք-Միություն կապերի ամրապնդմանը: Իսկ կոնկրետ գործերն ու ծրագրերը ես արդեն թվարկեցի:

Ձեր հարցին ի պատասխան նկատեմ, որ Միությունը դարձել է սահմանադրական հասկացություն, հիմնական օրենքով ամրագրվել են պետության անելիքները, հայկական սփյուռքի հետ կապված, կարևորվել են հայապահպանությունն ու հայրենադարձությունը, այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանումը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացումը, ազգային միասնության ամրապնդումը, համապետական ու համազգային շահերը (ՀՀ Սահմանադրության 19-րդ, 123-րդ, 127-րդ և այլ հոդվածներ):

Ուստի, Միությունի հետ աշխատանքներն առավել քան կարևոր են: Այսօր նախարարությունում աշխատում են քաղաքացիական ծառայողներ, իսկ քաղաքացիական ծառայության անցնելու պարտադիր պայման է Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը: Հայրենիք-Միություն կապերի սուբյեկտները ոչ միայն ՀՀ քաղաքացիներն են, այլև տարբեր պետություններում ձևավորված հայկական համայնքների անդամները, հետևաբար կարելի է այնպիսի լուծում գտնել, որ սփյուռքահայերը նույնպես աշխատելու հնարավորություն ստանան:

– Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր հետագա գործունեությունը:

– Ակնհայտ է, որ ձևավորվելու է նոր թիմ՝ նոր մոտեցումներով և ծրագրերով: Ես լիահույս եմ, որ այդ թիմը հաջողություններ կարձանագրի, որ Հայաստանում և Միությունում մեր հայրենակիցների սպասմունքներն իրականություն կդառնան, և, իհարկե, սփյուռքյան ոգևորության արդյունքում նաև հայրենադարձության ծավալները կընդլայնվեն:

Իսկ ես այսուհետ եմ կշարունակեմ ծառայել երիտասարդների կրթության գործին, մեր պետության ու ազգի շահերին:

– Ի՞նչ կավելացնե՞ք հարցազրույցի ավարտին:

– Դիմում եմ իմ սիրելի հայրենակիցներին, սփյուռքահայերին, աշխարհի տարբեր անկյուններում ապրող իմ քույրերին ու եղբայրներին և հպարտորեն ասում, որ ինձ վիճակվեց իմ համախոհների հետ, ձեր անմիջական աջակցության շնորհիվ ստեղծել և կայացնել ՀՀ սփյուռքի նախարարությունը: Հայաստանի անկախացումից հետո սփյուռքահայերի ոգևորությունը,

Հայրենիքին ծառայելու և Հայրենիքի հետ գործակցելու ցանկությունները շատ դեպքերում մոտ էին չհամակարգված, և այդ պատճառով դուք հաճախ հիասթափվում էիք և չէիք կողմնորոշվում, թե որտեղ գտնեք ձեր հարցերի պատասխանները:

Միությունի նախարարությունը դարձավ այն դուռը, այն կենտրոնը, որտեղ լսեցին ձեզ, գործակցեցին ձեզ հետ, քննարկեցին բազում-բազում հարցեր Հայաստան-Միություն գործակցության վերաբերյալ, մշակվեցին և իրականացվեցին բազմաթիվ հայանպաստ ծրագրեր քայլ առ քայլ կոտրելով նախկինից եկող կարծիքախառնություն և ամրապնդելով համազգային համերաշխության և գործակցության համար անհրաժեշտ հիմքերը:

Մենք մեր թիմով արեցինք այն, ինչ հնարավոր էր և ինչ կարող էինք:

Ես եղա շատ համայնքներում, տեսա ձեր ազգային կերպարը, հայրենասեր ոգին և երիտասարդությանը հայ պահելու հերոսական քայլերը: Ձեզանից եմ շատ բան սովորեցի, դուք եղաք իմ խորհրդատուն և աջակիցը, քննադատը, բարեկամն ու ընկերը: Խորապես շնորհակալ եմ և երախտապարտ, որ հնարավորություն եմ ունեցել ձեզ հետ աշխատելու:

Վստահ եմ մեր ցանած սերմերը փարթա՛մորեն կծլարձակեն, մեր բացած ակոսները առավել կխորանան և նոր հանգրվանների կհասնեն:

Պետք է ամեն ինչ անել, որ հին օլիգարխը չփոխարինվի նորով



Հայտնի գործարար Ռուբեն Վարդանյանը Միջազգային հուշահամալիրում լրագրողների առաջ, որ իրենք իրենց ծրագրերով 18 տարի փորձում են Հայաստանը դարձնել բարգավաճ ոչ թե խոսքով, այլ գործերով:

«Եվ մենք ուրախ կլինենք, որ այն էներգիան, այն էմոցիան, որը երեկ կար, կուղեւորվի գնա առաջ և փոխի Հայաստանը դեպի լավը: Մյուս կողմից ես հասկանում եմ, որ

մենք հիմա ունենք շատ էմոցիոնալ պահ, որ եթե ճիշտ չօգտագործվի և չդառնա պոզիտիվ, դա մեծ վտանգ է:

Հայ ազգը պիտի միանա, և մենք բոլորս միասին պետք է փորձենք ամեն ինչ անել, որ երեկվա հաջողությունը, որ առանց արյան տեղի ունեցավ այս ամենը, նախկին պատմությունը չունենա:

Դրա համար ես հույս ունեմ, որ և կառավարությունը, և այն մարդիկ, ովքեր փողոցում էին պահանջով, հասկանալի ամեն ինչ պետք է անենք, որ նոր Հայաստանի ռազմավարությունը դառնա ընդհանուր ծրագիր:

Եվ մենք բոլորս պետք է հասկանանք, թե ինչ նոր ձևի Հայաստան ենք կառուցում, ոչ թե ունենանք նոր օլիգարխ, որը կփոխի հին օլիգարխին», – ասաց նա:

Լրագրողների հարցին՝ ո՞ւմ նկատի ունի օլիգարխ ասելով, Մերձ Սարգսյանին և, նա պատասխանեց. «Ես նկատի ունեմ մարդկանց, ովքեր գալիս էին տարբեր մտքերով, բայց հետո դառնում օլիգարխ»:

Ռուսաստանաբնակ գործարար Ռուբեն Վարդանյանի հիմնադրած IDeA բարեգործական հիմնադրամը նախատեսում է Դիլիջանում 17 մղո դրամի ներդրում անել: Ներդրումային ծրագիրը ներառված է ՀՀ կառավարության մայիսի 11-ի կառավարության որոշմամբ:


Նախատեսվում է Դիլիջան քաղաքում կառուցել միջազգային ճափանիշներին համապատասխան առողջարանային կենտրոն, որը պետք է խթան հանդիսանա բժշկական զբոսաշրջության զարգացման համար: Ռուբեն Վարդանյանը նաեւ մտադիր է բարե-

կարգել Դիլիջանի քաղաքային լճի հարակից տարածքը, քաղաքային զբոսայգին ու մարզադաշտը:

Այս աշխատանքները նախատեսվում է ավարտել 5 տարում: Ծրագրի ավարտին Դիլիջանում կբացվի շուրջ 400 աշխատատեղ՝ 500000 միջին ամսական աշխատավարձով: Իսկ մինչ այդ ժամանակավոր աշխատատեղեր կբացվեն շինարարական ծրագրերով:

Ռուբեն Վարդանյանը խոստացել է 1070 ժամանակավոր աշխատատեղ՝ առնվազն 200000 դրամ աշխատավարձով:

ՀԻՄԱ ԿԱ՛Մ ՑԱՏԿ ԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՊԱԳԱՅԻՆ ԸՆԴԱՌԱՋ, ԿԱ՛Մ ԳԱՅԱՎԻԺՈՒՄ ԵՆՔ ԱՆԴՈՒՆԴ



Հարցազրույց արձակագիր Լեւոն Ջավախյանի հետ

– **Պարոն Ջավախյան, բոլորս ականատես եղանք, որ 11 օր տեւած պայքարի այս փուլը հաջողությամբ պսակվեց, եւ, ի վերջո, Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց վարչապետի պաշտոնից: Ի սկզբանե պատկերացում էիք, որ իրավիճակն այսպես կփոխվի, հատկապես որ վերջին տարիներին բազմաթիվ քաղաքացիական եւ քաղաքական շարժումներ չկարողացան ժողովրդին ոտքի հանել: Ձեզ համար կանխատեսելի՞ էր այսպիսի ընթացքը:**

– Իմ մեջ սկզբում ավելի շատ տագնապ կար, քան ոգեւորվածություն: Մտածում էի, որ շարժումը չի ստացվի, եւ խայտառակ ձեռով կցրեն ժողովրդին ու նոր Մարտի 1 կլինի. մի խոսքով՝ Սերժի նման էի մտածում: Նիկոլ Փաշինյանն ապացուցեց, որ ինքը ոչ միայն տաղանդավոր գրող է, լրագրող, այլեւ տաղանդավոր քաղաքական գործիչ: Այն, ինչ ինքն արեց, չեմ կարծում, թե որեւէ մեկն աներ: Քաղաքականության մեջ ինքն այն կրիտիկական կետն էր, որից կարող էր այսպիսի մեծ շարժում սկսել: Այն էներգիան, որ ինքն ունի ու կարողացավ վարակել ժողովրդին, ոչ ոք չունի: Պատահական չէ, որ ասում էին իր սեզոնի ուսապարիկ մեջ միջուկային ռեակտոր կա, որն անընդհատ մեծցնում է այդ մարդուն: Դա «մեկ քայլ» չէր, դա գործ էր: Ժողովրդի մեջ կար համապարփակ ատելություն առ այս իշխանությունները, դա հարկավոր էր ցրի երես բերել, բայց չկար այդ մարդը, ու հանկարծ եղեւ Նիկոլ Փաշինյան: Ժամանակին ես մի հոգովմ էի գրել «Քաղաքականության սիրտը» վերնագրով: Այնտեղ մեջբերել էի Նապոլեոն Բոնապարտի խոսքը, որտեղ ինքն ասում էր՝ քաղաքականությունը սիրտ չունի: Բոնապարտը նկատի ուներ անցյալի ու ներկայիս պոռնիկներին, որ նստում են Աժ-ում ու կառավարական այտոռներին, բայց ես դեռ էն ժամանակ ասել էմ, որ կա նաեւ շիտակ քաղաքականություն, եւ ցույց էի տալիս Նիկոլ Փաշինյանին ասելով. «Ես քաղաքականության սիրտը»: Այս պահին Նիկոլ Փաշինյանը քաղաքականության սիրտն է, եւ Աստված ոչ անի, որ ես հիասթափվեմ ու ասեմ, որ Բոնապարտն ավելի ճիշտ էր, քան ես: Այսօրվանից կադրթեմ հանուն այն բանի, որ, այնուամենայնիվ, շիտակություն լինի քաղաքականության մեջ: Ու այդ սիրտը բազում երակներով, զարկերակով բաբախում է ամբողջ ժողովրդի մեջ, առանց այդ արյունատար անոթների սիրտը չէր բաբախի, եւ այս շարժումը կապացուցի, որ, բացի ոտքերից, ունի նաեւ գլուխներ՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի եւ մյուսների: Միայն մի Նիկոլով գարուն չի գա, եւ թող չմտածեն, որ այս շարժումը մի ծաղկի գարուն էր:

– **Ի վերջո, ի՞նչ եք կարծում՝ ո՞րն էր այս շարժման հաջողության գրավականը: Շարժման լոգունգները, սիրո քարոզն ինքնանձի դեր խաղացին այդ հարցում:**

– Նախ այդ շարժման համար հող կար: Այս հողը ժողովրդին էր, այդ թույնը, ատելությունը, կոռուպցիան, դա թարախի պալար էր, որ պատրաստ էր պայթելու, եւ չկար այն ասեղը, որ պետք էր դա բլացներ: Նիկոլ Փաշինյանը եղավ այդ ասեղը, բայց ինչու՞մ է Նիկոլի առավելությունը մյուս քաղաքական գործիչներից, հատկապես որ էլի կային քաղաքական գործիչներ, էլի կար ատելություն, էլի էին ուզում բարձրացնել դա, բայց Նիկոլը գործ արեց շարժում: Ոտքով այդքան քայլեց, բզբզեց, իսկ այդ ամբողջն աշխատանք էր, քաղաքական գործունեություն: Որքան էլ Լեւոն Տեր-Պետրոսյանը կանգնում էր ու առավել խելոք ու պաթոսով, ջերմագին ելույթներ

էր ունենում, ժողովուրդը չէր գնում, որովհետեւ քաղաքական գործունեությունը չկար, այդ աշխատանքը չկար: Նիկոլն ինչպես «Ելքի» քարոզարշավի ժամանակ տուն առ տուն, փողոց առ փողոց քայլեց, այնպես էլ այս դեպքում նույնն արեց: Ամեն գործ մեծագույն աշխատանքի արդյունք է, եւ ապշած եմ նրա աշխատանքով, նրա ֆիզիկական պատրաստականությամբ: Այս ամենն աշխատանքի արդյունք էր, նա տեր դարձավ ժողովրդի դարդին ու ցավին:

– **Այս օրերին շատերն էին համեմատություններ անում 88-ի, 2008-ի շարժումների հետ, հատկապես 88-ի շարժման զարթոնքի հետ, որն այս օրերին ապրեցինք: Դուք մասնակցել էք 88-ի շարժմանը, զիդր ունեք այդ օրերի մասին գրված: Ինչո՞վ են նման ու տարբեր այս շարժումները:**

– Այն սերունդն արեց իր գործը, եւ փառք ու պատիվ այդ սերնդին: Հիմա, որ նայում եմ իմ սերնդի մարդկանց, ովքեր ամբողջ դարաբաշխյան շարժման միջով անցել են, նրանց դեմքերը կա մ ճմրթված թաշկինակի են նման, կա մ հաշմանդամության սայլակին զամված մարդիկ են, հոգնած, բեզարած: Հիմա եկել է մի նոր սերունդ, որ իսկապես այդ սերնդի ժառանգությունն է, նրանք չեն տեսել դարաբաշխյան շարժումը, նրանք նոր սերունդ են, որոնք նոր Հայաստան են ուզում: Նա համազգային շարժում էր, որտեղ բոլորը կային, իսկ այս շարժման մեջ ավանգարդը երիտասարդությունն է, եւ դա է ամենամեծ առավելությունը: Այս քայլը հիմա անում է երիտասարդությունը ու քայլ է անում դեպի ապագա, դեպի նոր Հայաստան: Ուրեմն արժե ապրել թեկուզ այս օրը տեսնելու եւ այս երջանկությունն ապրելու համար: Ժողովուրդը պայքարող ոգով, բաց ձեռքերով ու տաք սրտերով դեպի ապագան է գնում: Նրանք ստեղծում են նոր Հայաստան, եւ Աստված չանի ինչ-որ բան խաթարի դա:

– **Սերժ Սարգսյանի պահվածքը, այնուհետ՝ նաեւ հրաժարականը ինչպե՞ս էք գնահատում: Մեծ շախմատիստի միջը կարծես ցրվեց:**

– Այս շարժման մեջ, Նիկոլ Փաշինյանից բացի, որոշ չափով ներդրում ունի նաեւ Սերժ Սարգսյանը: Ինչ առումով: Այս բանը, որ կատարվեց եւ կատարվում է, չկատարվեց Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակ, որովհետեւ 96-ին ճնշվեց: Բայց Սերժ Սարգսյանն իր գործունեությունը 2 առումով հող ստեղծեց այս շարժման համար: Առաջինը դա կոռուպցիան, կաշառակերությունը, անարդարությունն էր, երկրորդը ինչ-որ չափով իր դեմոկրատիկ կեցվածքը: Նա ինքն իր քայլով ներքայլ կատարեց, եւ դրանով նախադեպ ստեղծվեց, որ ինքը կամովին, առանց արյունի թողնի իշխանությունը:

– **Բայց տեսանք նաեւ, որ սպառնաց Մարտի 1-ով:**

– Բայց նաեւ ասաց եւ սխալ էի, Նիկոլը ճիշտ էր: Ոչ ոք այդ խոսքը չէր ասի: Ինչում է Սերժ Սարգսյանի մեծագույն վաստակը. նա հետագայի համար նախադեպ է ստեղծում, ժողովուրդը կարող է ըմբոստանալ, իսկ ձայն բազմաց կդառնա ձայն Աստծո: Եթե այդպես լինի, ուրեմն կարող է իշխանությունը շամպանսկու խցանի նման դեկավարին դուրս շարտել: Ինքն ստեղծեց այդ նախադեպը: Մինչեւ այդ այդպիսի բան չի եղել: Հիմա եթե Նիկոլ Փաշինյանը գա, ու նույն մալխինացիներն ու անարդարությունները լինեն, նա էլ կմատնվի այդ ճակատագրին:

– **Այդ նախադեպը Լեւոն Տեր-Պետրոսյանը չստեղծե՞ց իր հրաժարականով:**

– Նա ներքիշխանական հեղաշրջում էր, եւ 96-ին ժողովուրդը չկարողացավ այդ բանին հասնել: Մա համաժողովրդական ցամաքն, պայքարի արդյունք է, որը եւ, այնուամենայնիվ, հեղափոխություն չէի անվանի, որովհետեւ հեղափոխությունը ենթադրում է սոցիալական կարգերի փոփոխություն: Մենք ոչ ֆեոդալիզմից կապիտալիզմի ենք անցնում, ոչ կապիտալիզմից սոցիալիզմի: Մենք ընդամենը իշխանության փոփոխություն ենք անում՝ եղբայրություն, արդարություն, հավասարություն վերստին հաստատելու համար:

– **Պայքարի 2-րդ փուլն ենք թեւակոխել, ի՞նչ կանխատեսումներ կան, արդյոք 334-ն նո՞յնպես հրաժարական կտա:**

– Էլի տագնապը եկել՝ սեւ ամպի պես չոքել է իմ սրտի վրա, ինչո՞ւ, որովհետեւ Սերժ Սարգսյանը գնացել է, բայց ոչինչ չի փոխվել: Այս

173

«Մերժիր Մերժին» շարժումը հո Մերժի՞ն դեմ չէր. դա ամբողջ համակարգին դեմ էր: Իսկ հիմա ամբողջ համակարգը մնացել է, եւ Կարեն Կարապետյանը սոսկ Մերժ Սարգսյանի ժիլետի մի թեւն է, որ մնացել է: Հիմա ժամ առ ժամ, րոպե առ րոպե քաղաքական իրավիճակ է փոխվում, եւ այստեղ մարգարեանալ ու կոնկրետ բան ասել, շատ դժվար է: Սարգսյանն ալ ու պահով մի բան եմ ուզում ասել. մի 10 տարի առաջ, երբ առաջին պատմվածքներս տպագրում էի Նիկոլ Փաշինյանի «Հայկական ժամանակ» թերթում, այդ ժամանակ Նիկոլին ասացի Նիկոլ, լավ իմացիր, դու վաղը, մյուս օրը դառնալու ես Հայաստանի նախագահը: Չգիտեմ ինքը հիշում է այդ խոսքերը, թե չէ, բայց ես դա ասել եմ իրեն: Հիմա դա մոտ է իրականությանը, ու ոչ թե նախագահ, այլ հնարավոր է վարչապետ դառնա: Ես տեսել եմ այդ էներգիան, որ այն ժամանակ ճակատին էր, աչքերի մեջ: Իսկ Կարեն Կարապետյանի դեմքն ուղղակի սկսեց փայլել, հենց դարձավ վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար: Այ մարդ, ինչքան քաղցր է այդ պաշտոնաբաղձությունը, որ անգամ վառողի տակառի

վրա ըմբռնվում է իշխանության վայելքը: Իմ հիմնական տազնալը ուրն է մեր Հայաստանն ինչ-որ տեղ պայքարի թատերաբեմ է, եւ կարծես բախվելիս լինեն Ամերիկայի ու Ռուսաստանի շահերը: Անտված չանի, որ այդ շահերի բախման մեջ մենք ունենալով լինենք: Իրա համար ես ողջախոհություն եմ ցանկանում շարժման անդամներին, ժողովուրդը պետք է իր ձեռքը վերցնի իշխանությունը, սա բարեպատեհ պահ է, եթե ժողովուրդը չվերցնի իր ձեռքը իշխանությունը, եւ իշխանական ուժերը հաղթանակեն, ապա Հայաստանն առնվազն 25 տարով հետ կմնա քաղաքակրթությունից: Հիմա կամ ցատկ ենք կատարում ապագային ընդառաջ, կամ գահավիժում ենք անդունդը: Այս պահին դեռեւս հաղթանակ չկա, պետք է դա գիտակցել, իշխանություններն ամեն կերպ կառչած են այդոռներին, քաղցր բան է այդոռնը, երբ այդոռն վրա նստած են, գլխով չեն աշխատում, այլ ավելի շատ իրենց հետույքով, իսկ հետույքի տված միտքը ընդամենը ռեգրես է:

Սոնա ՄՐԱՄՅԱՆ

<https://www.hraparak.am>

Քայլո. Լոռիից Երևան հասած հեղափոխության շունը

Սև ու սպիտակ գունավորմամբ շունը, որ վերջին օրերին հայտնի դարձավ Քայլո-Չալո անունով, «Իմ Քայլո» շարժմանը միացավ Լոռու մարզից:

Թափառող կենդանին շարժման անդամների հետ անցավ Հայաստանի մի քանի մարզով և 2 շաբաթ անց հայտնվեց Երևանում:

Առողջական խնդիրների պատճառով Քայլոն Երևանում տեղափոխվեց «Paws» անասնաբուժական կլինիկա, որտեղի մաս-



նագետների օգնությամբ բուժվեց ու ոտքի կանգնեց: Կլինիկայի բժիշկները Քայլոյի բուժման բոլոր ծախսերը վերցրեցին իրենց վրա:

Այսօր շունը որդեգրել ցանկացողները շատ են ու հույս կա, որ շարժման սիմվոլ դարձած Քայլոն ոչ միայն կունենա իրեն սիրող ընտանիք, այլև առիթ կդառնա Հայաստանում թափառող կենդանիների խնդիրների բարձրաձայնման ու լուծման համար:

Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ բրյուների 18-ը

2018 թվականի մայիսի 8-ին, ժամը 13.34 – ին Հայաստանի Ազգային ժողովի որոշմամբ Նիկոլ Փաշինյանը, համաձայն նոր սահմանադրությամբ սահմանված կարգի, ընտրվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, Հայաստանի Հանրապետության ղեկավար: Ընտրությանը նախորդել էին քսանօրյա համագային մասշտաբի ցույցերը, որոնք Սովետական իշխանությունից հետո հետսովետական Հայաստանում ձևավորված կառավարման օլիգարխիական-կրիմինալ համակարգին բերեցին իր տրամաբանական վախճանին: Երկրի նոր, ժողովրդի հարյուր տոկոսի կողմից անվերապապահուն վստահություն ու իշխանություն ստացած մարդն այսօր, ժողովրդի անսահման վստահության հետ մեկտեղ, միաժամանակ անմխիթար մի ժառանգություն է ստացել:

Սովետական իշխանությունից հետո մինչ այսօր հայ ժողովուրդը տնտեսական ու մշակութային անկում է ապրում. երեք սերունդների արյուն-արտառությունը ստեղծված ահռելի նյութական արժեքները ցրվել են տրված, ժողովրդի կեղծ լքել է երկիրը, իսկ մնացած կեղծ խեղդվում է պարտքերի ու աղքատության մեջ, հացի խնդիրը բռնել է ողջ հայության կոկորդից: Ստեղծվել է երեք տասնյակ Բազազ Արտեմների ու երկու միլիոն Գիքորների պետություն: Անհասկանալի ու անողնաշար ներքին ու արտաքին քաղաքականությունը ժողովրդի զայրույթը հասցրեց կրիտիկական աստիճանի ու նա ասաց իր վճռական խոսքը: Միակ իսկական ու շոշափելի նվաճումը

հետսովետական ժամանակաշրջանում մեր Հայրենի հողերի մի մասի վերադարձն էր, նվաճված հայ ժողովրդի լավագույն զավակների արյամբ ու տաղանդով: Ի տարբերություն վերջին տասնամյակում մոլորակի վրա տեղի ունեցած հեղափոխությունների ու հեղաշրջումների, հայաստանյան իշխանափոխությունն անցավ առանց կրքերի բորբոքման, առանց բախումների ու առանց արյան, ու որ ամենակարևորն է, հուսով եմ, առանց արտաքին գործոնների: Այս առումով Նիկոլ Փաշինյանի հաղթանակը նման է Նապոլեոնի բրյուների 18-ի (1799 թիվ) ու Վալյուր օրերի (1815 թիվ) իշխանությունը վերցնելուն, առանց որևէ կրակոցի կամ գոհի: Եթե հռչակավոր կորսիկացու թիկունքում կանգնած էին նրա անթիվ հաղթանակները համաշխարհային ռազմական ու դիվանագիտական պատերազմներում, ապա Հայաստանի նոր վարչապետի թիկունքում կանգնած էին միայն նրա տաղանդը, նրա անթիվ հաղթանակները առավել համեստ, Հայաստանի քաղաքական թատերաբեմում, բանտախուց-հրապարակ-նոստիկանություն- Ազգային ժողով ճանապարհի վրա: Սակայն եթե Նապոլեոնի ճանապարհին երբեմն հանդիպում էին արժանի հակառակորդներ, ունենում էին կայուն դիրքորոշում, տանում հաղթանակներ ու կրում դաժան պարտություններ, ապա Փաշինյանի, որպես քաղաքական գործչի, ճանապարհին այդպես էլ չգտնվեց գոնե մեկ, փոքրիշատե արժանի հակառակորդ, նրա հետ առճակատվելու ու որևէ արժանավայել դիմադրություն ցույց

տալու համար: Ակամա հիշում ես նույն Նապոլեոնի արտաքին գործոց նախարարի խոսքերը. «Ամբողջ ժողովուրդներ մեծ սարսափ էին ապրելու, եթե իմանային, թե ինչպիսի ոչնչություններ են իրենց կառավարում»: Ու Փաշինյանի համարձակ գործողությունները, գումարվելով ժողովրդի վստահության հետ, առաջին իսկ հարվածից փշրեցին, ցրվեցին փշրեցին գործող օլիգարխիական, մաֆիոզական համակարգը: Ես բազմիցս խոշորացույցի տակ ու մեծ ուշադրությամբ նայել ու վերլուծման եմ ենթարկել նրա ելույթները տարբեր ատյաններում ու կարող եմ ասել, որ նրանք աչքի են ընկնում մաթեմատիկական որոշակիությամբ, ձևի ու բովանդակության բարձր որակով, ամբողջականությամբ, արտահայտչականությամբ ու հեղինակի հոետորական մեծ արվեստով, մինչդեռ նրա ընդդիմախոսների խոսքը համարյա միշտ եղել է գունատ, անվստահ ու աղքատ: Փաշինյանի խոսքի հիմքում միշտ եղել է իրականությունն ու ճշմարտությունը, հավատը ճշմարտության հաղթանակի նկատմամբ, իսկ նրա հակառակորդների խոսքը միշտ էլ գուրկ է եղել վերոհիշյալ արժանիքներից: Փաշինյանի ճշմարտությունը տեսականորեն ու կարող էր միայն հիվանդանալ, բայց մեռնել երբեք:

Այսօր մեր ժողովրդի առջև ծառացել է արդեն հայկական դարձած ռուսական «Ի՛նչ անել» հարցը: Անթիվ տնտեսական, քաղաքական, սոցիալական ու ռազմական

180

հարցերը պահանջում են արագ ու արդյունավետ լուծումներ ու ես համոզված եմ, որ Նիկոլ Փաշինյանը արդեն գնահատել է իրավիճակն ու որոշել է մեր անելիքը: Մեզ պետք են ազգի բոլոր ուժերն ի մի բերող քայլեր ու կոնկրետ կառույցներ, հասկանալի ու կոնկրետ խնդիրներով, գործողությունների ալգորիթմով ու աճող դինամիզմով, մեզ պետք է կյանք մոբիլիզացնող ռեժիմով, իսկ պետական ապարատն իմ կարծիքով, պետք է աշխատի պատերազմական ռեժիմով: Բայց կկարողանա՝ արդյոք մեկ մարդը այս ամենն անել, ունենալով ընդհամենը մի քանի համախոհներ Ազգային ժողովում, չունենալով ռազմական կարգապահություն ունեցող, թեկուզ փոքր, բայց կուսակցություն: Այդ պակասը պետք է լրացնենք մենք, շարքային քաղաքացիներս, օրենքները հարգելով ու կատարելով, հասկանալով, որ այսուհետև արված մեր ամեն մի քայլը պետք է համապատասխանի այն ոգուն, որը դրսևորեց ողջ ժողովուրդը միայն այն այս օրերին: Սկսած ճանապարհային երթևեկության կանոններից, ինստիտուտում քննություններ տալուց, վերջացած դիվանագիտական փաստաթղթերի անբիծ ձևակերպմամբ: Միայն այսպես մենք կարող ենք երկրի ղեկավարի ցավին ցավակից ու կարիքին կարելից լինել: Իսկ այն մասին, որ նա մեր կարելիցն ու ցավակիցն է, ասում է երիտասարդ Փաշինյանի մագերում արծաթի աննախադեպ առատությունը:

Օտար է Փաշինյանի սուսցած ծառանգությունը: Նա նման է մի նավապետի, որի նավում անձնակազմի կեսը օվկիանոսի կենտրոնում լքել է նախ ու ցրվել է ուրիշ նավերով, շարժիչը խափանվել է ու կողմնացույցը չի աշխատում: Միակ դրական կողմը դա մնացած անձնակազմի վստահությունն է, որը կսպառվի, եթե նավապետը արագ չվերականգնի նախ ու չհասցնի հարազատ նավահանգիստը: Ու ես կոչ եմ անում բոլոր մեր ազգակիցներին ցույց տալ արժանապատիվ մարդուն ու արժանի քաղաքացուն հարիր վարքագիծ իր հետագա քայլերում, առանց բացառության, նույնիսկ մանրուքների մեջ:

Երեք տասնամյակ հետ գնանք. ՄՍՀՄ-ի դավաճանական հանձնումը մեկ նպատակ ուներ – դա աշխարհակալ տերության սեփականության բաժանումն էր տիրող բյուրոկրատական ապարատի պարագլուխների միջև ու թող ոչ մի ստախոս ու կեղծ տեսաբան չբարբաջի ինչ-որ ազգային-ազատագրական պայքարի, ինչ-որ դասակարգային պայքարի, կոմունիստական երևակայական բռնապետության դեմ պայքարող ինչ-որ խմբի կամ հունական անմաշ վերնաշապիկի դեմոկրատիա կոչեցյալի հաղթանակի մասին: Ամեն ինչ ծայր աստիճան պարզ է. 91 թվականին անգլոսաքսերի քաղաքակրթությունը հաղթեց ռուսական քաղաքակրթությանը, որի մի մասն էլ կազմում ենք մենք, հայերս: Իսկ ցանկացած պատերազմում պարտված կողմը վճարում է բոլոր ծախսերը ու վաճառում իր պարտվողներին: Հայաստանում չգտնվեց մեկը, ով այդ քաղաքական թոռնուհուն ապահովեր ազգի փրկությունը, լուծեր պատերազմի ու խաղաղության, երկրաշարժի, տնտեսական ու սոցիալական հարցերը: Կոմունիստական պետերը ինքնուրույն որո-



շումներ կայացնելու համար խելք, միտք ու կամք չունեցան ու երկիրը նետվեց անորոշության, խառնակության ու քաոսի գիրկը: Արդյունքում ունեցան ազգային հարստության թալան, ունեցվածքի բաժանում մի քանի տասնյակ մարդկանց միջև, ավերակների մեջ մնացած երկրաշարժի գոտի, անվերջանալի քաղաքական սպառնալուծություններ, հոկտեմբերի 27 ու մարտի մեկ, անվերջանալի արտագաղթ ու հիսուն տոկոսանոց աղքատություն:

Ռեալ է երկրի հիմնական սեփականատերերի՝ քաղաքական վերնաշապիկ հագած Հայաստանի հանրապետական կոչեցյալ կուսակցության գործիչների ու նրանց սեղանից ոսկոր թոցնողների սաբոտաժի վտանգը, չնայած Փաշինյանը բազմիցս արդեն ասել է ազգային շահերի առաջնայնության, ազգային հաշտության ու համերաշխության մասին: ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՓՈՂԴ, ԻՆՖՈՐՄԱՅԻՆՅՈՒՆԻ առյուծի բաժինը առայժմ նրանց ձեռքում է ու ես համոզված չեմ, որ նրանք ռևանշի փորձեր չեն անի: Պետք չէ մոռանալ, թե ինչպես էին նրանք ատաճների կոճառոցով զիջում այն չարաբաստիկ տապը ձայները, զիջում էին, որովհետև գիտեին, որ հակառակ դեպքում հրապարակում հավաքված ժողովուրդը նրանց կախելու էր հենց հրապարակում աճող առաջին իսկ ծառերից: Հարկադրական նահանջ էր սա, իմ կարծիքով, որը միշտ էլ հղի է լինելու դեմոկրատիայի խեղկատակային վերնաշապիկ հագած չարիքների բռնապետության վերադարձով:

Եվ այսպես, Հայաստանի ժողովուրդը սպասում է հրատապ ու կարևոր որոշումների: Ուզում է իմանալ հայկական պետության վեկտորի շարժման ուղղությունը: Փաշինյանը առայժմ դիվանագիտորեն ոչինչ չափող հայտարարություններ է ուղղում թե՛ արևելյան, թե՛ արևմտյան ուղղությամբ:

Ես, որպես շարքային հայ, գտնում եմ, որ հայկական պետությունը, չնայած բոլոր տարածաշրջանային, ռազմական, դիվանագիտական բարդությունների, պետք է Ռուսաստանի հետ բարիկաղի նույն կողմում լինի: Կա՛ հայտնի դիվանագիտական բանաձև. ՎԱՏ Ե, ԵՐԲ ԱՆԳԼԻՄՅՈՒՆ ՔՈԹՆԱՄԻՆ Ե, ԲՍՅՅ ՄԿԵԼԻ ՎԱՏ Ե, ԵՐԲ ՆԱ ՔՈ ԲԱՐԵԿԱՄՆ Ե: Որովհետև մենք Ռուսաստանի հետ մի քանի հարյուր տարի գտնվում ենք նույն քաղաքական, աշխարհագրական, մշակութային տարածքում, նույն պատմությունն ունենք, որովհետև Հայաստանի բնակչության կեսի դարերի խաչմերուկում տեղահանության հիմնական մեղավորը անգլոսաքսերի հակառակվետական ու հակառուսական քաղաքականությունն էր ու է, որովհետև

այսօրվա տեղահանված ժողովրդի ճնշող մեծամասնությունը կազմող զանգվածը Ռուսաստանում է հիմա գտնվում: Վերջապես, մեր ազգի Հերոսական սերունդն էր, ով Ռուսաստանի հետ հաղթեց Հայրենական Մեծ պատերազմում ու մեր ցեղակիցների հայտնի ու անհայտ գերեզմաններն են սփռված Բարենցի ծովից մինչև Կովկաս ու Ստալինգրադից մինչև Բեռլին, մենք աշխարհակալ ՄՍՀՄ-ի համար կովել ենք այնպես, ինչպես Ավարայրի ու Մարդարաբադի դաշտերում: Վերջապես Արմավիր, Բաֆֆին, Ջորավար Անդրանիկն ու Հովհաննես Թումանյանը մեր բազմաթիվ, իսկական մեծերի հետ ռուսական կողմաորոշման կողմակիցներ էին, իսկ ով կարող է բեկնալ նրանց տեսակետը: Վերջապես Ռուսաստանը աշխարհի ամենահարուստ պետությունն է, միայն Յակուտիան տարածքով հինգ հատ Ֆրանսիա է, ծածկված ոսկով, ավազաքարով ու կուսական անտառներով, ու որոնք կազմում են Ռուսական Արկտիկայի հարստությունների ընդհամենը ՄԵԿ տոկոսը: Ի դեպ, Յակուտսկում հայկական եկեղեցի կա, վերջերս կառուցված:

Ես չեմ ուզում այստեղ թվարկել վերջին վեց հարյուր տարվա Անգլիայի, հետագայում Բրիտանական կայսրության ու անգլոսաքսոնյան աշխարհի (ԱՄՆ-ի գլխավորությամբ) կատարած հանցագործությունները ուրիշ ազգերի ու ժողովուրդների նկատմամբ, միայն կնկատեմ, որ անգլիական պաշտամունքի առջև կանգնած է Կրոմվելի հուշարձանը, այն մարդու, ով իր ավագակալին բանակով իջնելով Իռլանդիա, սրի քաշեց բնակչության ութսունհինգ տոկոսին, որից առ այսօր Իռլանդիան ուշքի չի եկել, դառնալով առաջին գենոցիդի հեղինակը: Կուզենայի նաև հիշեցնել հարգելի ընթերցողներին, որ այսօրվա ընթերցողի գաղափարախոսությունը ծնվել է ոչ թե օսմանյան սուլթանների դոյալներում, այլ բրիտանական կայսրության կառավարական միջանցքներում, ավելի կոնկրետ տիրապետչական ռուսաստանյաց Պավերստոնի կաբինետում:

Հանձնարեղ քաղաքագետ պետք չէ՝ լինել տեսնելու համար, թե ինչքան մեծ է այսօր ամերիկյան շահերը պաշտպանողների կոնցենտրացիան Երևանում ընդհանրապես ու Փաշինյանի շրջապատում մասնավորապես: Ու Աստված մի՛ արարցե, որ Հայաստանը կտրուկ տեղադարձ անի արևմտյան ուղղությամբ: Քանզի հայտնի բան է, որ ցանկացած համակարգի գործունեության պարամետրերի ու ուղղության կտրուկ փոփոխությունը միշտ էլ համակարգի խափանման վտանգ է իր մեջ պարունակում:

Եկել է մեծ, պատասխանատու որոշումներ կայացնելու ժամանակը, հայ ժողովրդի ձևակապողական, լինել թե՛ չլինելու հարցի լուծման ժամանակը: Ու որպեսզի մեր ջանքերն իրար չանցնեն, ես նորից կոչ եմ անում մեր հայրենակիցներին իրենց ամենօրյա, ճշմարիտ քայլերով օգնել մեր երկրի նոր և արժանի ղեկավարին, այսինքն մեր Հայրենիքին: Դրանով իսկ մեզնից ամեն ոք, թեկուզ մեկ թիզ, բայց կարճեցնելու է դեպի փրկարար Արարատի գագաթը տանող մեր ընդհանուր տապանի դժվարություններով լի ուղին:

Մոսկվա, 13 մայիսի 2018 թ.

Սամվել ԱՎԿԵԼԱՆ

Ի՞ՆՉ ԵՍ ԻՄԱՅԵԼ, ԺՈՂՈՎՈՒՐԴ



Միշտ խուսափել եմ իմաստուն և ընդհանրացնող մտքերից, բայց այսօր դրա պահն է... Գնում եմք հոգեհանգստի:

Միկրոավտոբուսում, ինչպես ընդունված է, տխրագույն մտքերի հետ լսվում է օրվա խնդիրը՝ Նիկոլ, Գյումրի, Մայիսի 1 և այսպես շարունակ: Մկսել եմ վստահ ու ստացվում է, որ ինձ համար ճշմարիտ, աներկբա մտքեր են հորդում, ոգևորվում եմ... դու մի ասա, սկսվում է օրվա «հրապարակ», բայց ինձ համար անսովոր հարցադրումը՝ «կրթություն չունի, կեպկան գլխին, անթրաշ», «նախագահին մեջքով շուր եկած մի անտաշ» անձնավորություն հանկարծ հակադրվում է իշխանությանը, «Հանրապետության նախագահին» և նույնիսկ վերջնագիր է ներկայացնում: Ես էլ կարծում էի, թե միակամ ենք. չէ, այդքան միամիտ չեմ, բայց արի ու տես, որ հազարամյակների իմաստուններն են այդ փաստը արձանագրել և դրանից մտահոգվել՝ շահեր են բախվում. Զգում ես, որ երբ լուրջ, արմատական հարց պետք է լուծվի, սկսվում է մի հոգեմաշ գործընթաց՝ արժեքները սևացնելու ճանապարհին:

Անձնական, ընտանեկան, իբր կուսակցական շահերից բխող մի ճղճիմ բանավեճ է սկսվում, թե տղաս զինվորական է, ոստիկան է, մարզպետի տեղակալ, համայնքի ղեկավար, նախարար... Մտքերս խճճվում են, բարդ է, բայց՝ սիրելիներս, կա հետևյալը. Ամեն քաղաքն էլ երգի, թե շատ բարեկեցիկ ընտանիք ու մարդ, իմ կարծիքով, մեր օրերում պետք է գլխավորն ու երկրորդականը տարբերի: Ավելի քան 27 տարի է, մտածում եմ, որ լավ կլինի, Արցախյան հերոսական ազատամարտի կամքի ներքո զսպված և իմաստուն, «երկյտու» ու առյուծափրոտ վարք հրամցնենք, համբերություն դրսևորենք, որ հաղթենք:

Ասպարեզ է եկել համեմատաբար երիտասարդ անձնավորություն՝ Նիկոլ Փաշինյան, որին ուշացած եմ հասկանում... Վերջին տարիներին նրան ամեն կերպ և հմտորեն փորձում են վարկաբեկել, նսեմացնել... Ես էլ քաղաքական ու միջկուսակցական զգվառոցի աղմուկից հոգնած մի մարդ, որոշեցի, որ սա էլ մի պատվեր է, հերթական գործություն, խորհրդարանական խմբակցության իմ կողմից ընտրված, կամ չընտրված մի մարդ՝ դրեցի մի կողմ, կենցաղային խոսակցությունների ժամանակ, երևի նույնիսկ առանց մտածելու, փնտրել... Ներքի Տեր իմ... Ինչո՞ւ եմ այսօր գայրախում, հունից դուրս գալիս. Որովհետև ամեն անկյունից հիմա ինձ վերադարձնում են իմ բամբասանքը, փորձում են եղելի կերպով նսեմացնել մի մարդու, որը վերջապես իր համայնքներով ոտքի է ելել, ճանաչվել է անցել, հիմա էլ չափափում է Հայաստան աշխարհի մեզ ժառանգած հատվածը, ձայնն է կորցրել... Ի՞նչ է ասում: Ասում է փոխենք մեզ, փոխենք մեր կյանքը, մերժենք անմարդկայինն ու ոչ հայկականը, անարդարը, ծախսուն... Բա ինչպե՞ս են չկանգնում մի մարդու կողքին, ինձնից երիտասարդ, բայց ինձնից ավելի համարձակ, իմ և շատերիս մտքերն ու վշտերը կիսող մի «անթրաշ»՝ Նիկոլի կողքին, որը հոչակել է «ժողովրդական հեղափոխություն»:

Հիմա լրջանանք.

1. Այն ինչ տեղի է ունենում՝ ժողովրդական հեղափոխություն է, քանի որ այն, ինչ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում վերջին 25 տարիներին, համազգային լարումի, զսպվածության, ասկետիկ ու աղքատ կյանքի համալուծության, հույսի ու հավատի գուգադրությամբ, ցավոք նաև, փախուստի թոփշ է:

2. Մեր փոքրիկ, հպարտ հանրապետությունը Արցախի Հանրապետության ու մեր ողջ ժողովրդի հետ կնքած լուր, հայավարի մի պայմանագրով քառորդ դար կրում է բեռ, հավատ, երազանք, փոխարենը «խնդրում» արդարություն, փոխադարձ սեր, հարգանք, օրենք և հաղթանակի ուղերձ: Մեզ պատասխանում են 2017 թ. ընտրված

Ազգային ժողովի նիստի ելույթներով, հրապարակային քննանքով:

3. Այնպես են ղեկավարել, որ այս տարիների ընթացքում մեր հայրենիքում ձևավորվել են անուղղելի բեռներ, ատելի շերտեր ու խավեր, անվստահելի և իրար «քցող» ընկերներ ու եղբայրներ, հորը դատի տվողներ, էլ չեմ ասում՝ Նարեկացի կարդացող ու սխալ մեկնաբանողներ...

4. Ինչպես 1918 թ. մարտին Անդրկովկասի քաղաքական ուժերը սարսափում էին, թե մի բոլշևիկ Ստեփան Շահումյան Սարիղամիշի բոլշևիկացած ռուսական զորամասերով կարող է գրավել Թիֆլիսը և Անդրկովկասը խորհրդայնացնելու ճանապարհով լուծել հայկական համազգային ծրագիրը, այնպես էլ այսօր մի Նիկոլ, Գյումրիից քայլելով կարող է թմրած, հոգեմաշ հանրությանը արթնացնել, ազատագրել, փրկել:

5. Այս է ժամանակի հրամայականը. մի վարկաբեկեք այդ հպարտ երիտասարդին: Չէ՛ որ նա է բերում սպասված հոգևոր ազատագրումը՝ Վ. Տերյանի Հոգևոր Հայաստանը: Մատարենք նրան, վստահենք նրան: Միբեկի ժողովուրդ, սրանք պահի լոկ զգացմունքային ուղերձներ չեն... Գիտակից տարիքից և 1988 թ.-ից իմ ժողովուրդի հետ եմ, նրա մասնիկն եմ: Մեր հանրության հետ 30 տարի է ձգտում եմ լուսավորին, արդարին, ազնիվ կեցվածքին: Տարբերենք գլխավորը երկրորդականից, ազատվենք կեղծիքից, հազարամյակների բարոյական-գաղափարական մարգարեությունը սխալ ու սուտ կրողից ու մեկնաբանողից, ցեղի պաշտամունքը փողի պաշտամունքի իջեցնող փարիսեյներից, ապրիլի 23-ին մետրոյի վագոնում Մեծ լուրը ստացած աղջնակի հեկեկոցը այսօրվա քաղաքական «տորգի» հետ նույնացնելուց ազատվենք ու ազատագրվենք: Ո՛վ կմտածեր, որ 19-րդ դարի կեսերին Մ. Նալբանդյանի հոչակած Ազատությունը այսօր կրկին այդքան բարձր կհնչի:

Միբեկներս, այդ երիտասարդը մեզ է ինձ, հատկապես, ազատություն է պարզել. երբ ես 1990 թ.-ին պաշտպանում էի Ելցինի հոչակած դեմոկրատիան, լուսավոր հայրս հեգնանքով, բայց և իմաստուն հարգանքով աջակցեց ինձ, առաջ մղեց, երևի թե ինձնով անգամ թևավորվեց և, այդպիսով, մենք էլ մի քայլ արեցինք:

7. Ես Նիկոլին կոչում եմ ԱԶԱՏԱՐԱՐ, անձամբ շնորհակալություն եմ հայտնում ինձ ազատագրելու, հուսադրելու համար, ինձ, որ 57 տարեկան եմ, ինձ, որ միշտ հոգեպես ազատ եմ եղել, ազատ իմ Աստծո և «խելառ» հայրենիքիս հետ, բայց ոչ իմ «կողքինների» և հասարակության հետ...

8. Այնպես որ, չխառնենք արժեքները, իմ սիրելի ջահելներ ու ահելներ. հետևենք ժողովրդական հեղափոխությանը, վստահենք միմյանց ու ներդաժիտ լինենք, փորձենք անձնական, ընտանեկան, կուսակցական, իշխանական շահերը գոնե այս պահին ստորադասել գլխավորին՝ Հանրապետական կուսակցության «դավանած» ցեղակրոն, ազգապաշտ գաղափարաբանությանը...

Եվ վերջապես, Մասնա Դավթի պես, մի լավ թափ տանք մեզ ու նորից հիշեց՝ Հովհաննես Թումանյանին. չէ՛յ պգահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի՛, քանիսն անցան քեզ պես, քեզից առաջ, քո առաջ, Ի՛նչ են տարել նրանք կյանքից, քե՛ ինչ տանես դու քեզ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր, երկու օրվա քո ճամփեդ:

Անցյալ օրը ուսանողներս հարցրին, թե ում օգտին ի վերջո կքվարկեմ, ասացի՝ մեր ազատարար փրկչի օգտին: Պաթոսը շատ է, գուցե, և զարմանալի, նույնիսկ նրանք զարմացան, բայց և հասկացան, որ դասախոսի և իրենց միջև նվազեց, գուցե չկա արդեն տարիքային, գաղափարական անջրպետ: Նիկոլը և երիտասարդությունը ազատագրում են 21-րդ դարի սկզբի հայ հասարակությանը, այդպիսով նաև կամուրջներ գցում մեծ ու փոքր հարևանների միջև, նույնիսկ կարող է «եղբայրացնեն» նրանց: Միբեկներս, ապրիլի 23-ի մեր բացառիկ երջանկությունն ու ուրախությունը թող քեֆի չվերածվի, թող այն հաղթանակ բերի բոլորիս, թող բոլորիս երջանկությունն արցունքները կամքի վերածվեն, փոխանցվեն քաղաքական ուժերին, որոնք, հույս ունեմ, հազարամյակների իմաստությունը կկրեն: Նիկոլ Փաշինյանը ժամանակի հայ մարդն է: Հեռու քշենք քաղքենիական և սովորական դարձած նվաստացնող գնահատականների միջոցով մեծ նպատակը սևացնելու և ձախողելու ծրագիրը: Բարձրագույն արժեքը հայ մարդուն, հայկական քաղաքակրթությունն ու ժամանակակից հասարակությունը կեղծիքից, ստից, ազատագրելն է և իրական արժեքների հիմքի վրա մեր պետականության ամրապնդումը:

Վահան ՄԵԼԻՔՅԱՆ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՈՎԲԵՐ ԵՆ ԱՐԻԱՅԻՆԵՐԸ

(Հանրամատչելի ակնարկ)

Մոտ երեք դար է, ինչ աշխարհի տարբեր մասերում գիտնականների ու տարբեր խավի ու զբաղմունքի տեր մարդկանց կողմից շահարկվում են «արի, արիացի, արիական» տերմինները, որոնց առ այսօր հիմնավոր բացատրություն չի տրվել: Այսօր աշխարհում չկա մեկը, լինի տիտղոսակիր գիտնական, թե անկախ հետազոտող, ով սպառնալիք ու հիմնավոր պատասխան տա այն հարցին, թե ինչ ծագում ունեն «արի, արիացի, արիական» տերմինները և ինչ են նշանակում: Մինչև 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտն ու Գերմանիայի պարտությունը, «արիացի, արիական» տերմինն ընկալվում էր որպես մի հին, իմաստուն ու գերզարգացած մարդկային տեսակի բնութագիր: Մակայն ոչ ոք չգիտեր, թե երբ ու որտեղ են ապրել արիացիները, ովքեր են նրանց ժառանգները:

«Արիական» տերմինը XIX դ հին հնդկական և իրանական մշակույթների հմայքի ակնհայտ ազդեցության տակ ընդունվել էր որպես հին հնդեվրոպացիների անվանում: Ժամանակակից գիտական միջավայրում «արիական» բառով բնութագրվում է միայն հնդ-իրանական լեզվախումբը:

Վերոհիշյալ տերմինները գոյություն չունեն եվրոպական լեզուներում, իսկ մեր օրերում նրանց վերագրվող գաղափարները եթե Եվրոպայում ինչ որ ժամանակ եղել են, ապա ջնջվել են քրիստոնեության ժամանակներում: Դրանք Եվրոպայում տարածվեցին XVIII-XIX դդ. վերջերս և իրանական մշակույթների ու լեզուների հետ ծանոթությանը զուգահեռ: Այլ կերպ ասած, Եվրոպան, որտեղ ապրում են հնդեվրոպական լեզվաընտանիքի հիմնական լեզուների կրողները և որտեղ տեղադրվում է հնդեվրոպական նախահայրենիքը, ոչ մի առնչություն չունի «արի, արիացի, արիական» տերմինների հետ: Վերջիններս ծագել են եվրոպական լեզուների տարածման և հնդեվրոպական ենթադրյալ նախահայրենիքի տարածքներից դուրս:

Յնդկաստան – Յնդկաստանում «արի, արիացի, արիական» տերմինների հնագույն վկայություններն աստվածներին ձուլված հիմներում են, որոնց ժողովածուն հայտնի է Ռիգվեդա անունով: Ներկայումս ընդունված է այն տեսակետը, թե Ռիգվեդան ձևավորվել է Ք. ա. ~ XII դարում: Հակիրճ անդրադառնալով «արի, արիացի, արիական» տերմիններն արտահայտող վեդայական սանսկրիտի համապատասխան բառերին:

ari – Ար բառը Ռիգվեդայի առանցքային բառերից է: Միաժամանակ իմաստի առումով այն ամենաանորոշն ու անհասկանալին է մինչ այժմ: Ամերիկացի լեզվաբան Մ. Բլումֆիլդի բնորոշմամբ *ari* բառը «վեդայական լեզվի մեկնաբանման չարաձգիչն է»:

Ռիգվեդայի առաջին թարգմանիչներից մեկը՝ գերմանացի հայտնի մաթեմատիկոս և լեզվաբան Գ. Գրամանն իր կազմած «Ռիգվեդայի բառարան»-ում *ari* բառին վերագրվող բազմաթիվ իմաստները դասակարգում է ըստ 6 հիմնական նշանակությունների.

ա. գործունյա, ջանասեր
բ. ջանասեր (աստվածների նկատմամբ), բարեպաշտ, արդարալիաց

գ. ջանասեր (աստվածներին ուղղված փառաբանությամբ ու աղոթքներով)

դ. ազահատենչ, ազահաբար հարստության կամ մարտի ձգտող է. անաստված, անխիղճ

զ. թշնամի:

Նշենք, որ «թշնամի, ոչ արիացի, արիական աստվածներին չպաշտող» իմաստի համար վեդայական սանսկրիտում գործածական էր *dāsa* կամ *dasyu* բառը:

Գերմանացի Պ. Թիմեն Ռիգվեդայի թարգմանության ժամանակ, որպես *ari* բառի առաջնային նշանակություն համարեց «օտար» բառն իր բազմաթիվ նրբերանգներով (ուրիշ, խորթ, անհարազատ, կողմնակի և այլն):

Ռիգվեդայի ռուսերեն թարգմանության հեղինակ Տ. Ելիզարենկովան Ռեբեմս *ari* բառը թարգմանում է լրիվ հակառակ՝ «կողմնակից» իմաստով և ծանոթագրություններից մեկում գրում է, թե «ինչպես էլ լինի, *ari* բառի համար այստեղ «օտար» նշանակությունը քիչ է համապատասխանում համատեքստին»:

Լ. Ռեմեն, Ժ. Դյումեզիլ և Է. Բենվենիստը գտնում են, թե *ari*-ն «ներքին թշնամի» է: Է. Բենվենիստը գրում է, թե «*ari* բառի մեկ դրական, մեկ բացասական իմաստը չի շոշափում բառի բուն նշանակությունը»:

Իսկ այս ամենից բխում է, որ *ari* բառի բուն իմաստն անհայտ էր վաղ շրջանի հնդիկ մեկնիչների և դեռևս անհայտ է մերօրյա հետազոտողներին: Իսկ բառին վերագրված վերոհիշյալ հակասական իմաստների վերագրման պատճառը մեկն է. չիմանալով *ari* բառի

բուն նշանակությունն ու հենվելով հիմաի սուբյեկտիվ կերպով ընկալված ենթատեքստի տրամադրության վրա, թարգմանիչներից յուրաքանչյուրը փորձել է գուշակել բառի իմաստը:

Ռիգվեդայում հաճախ է արիական միությունը բնութագրվում *pañca janā*. = «հինգ ցեղեր» արտահայտությամբ, որոնց մեջ գերիշխող դիրք էր գրավում *āyu* ցեղը: *Āyu* ցեղանունը, որպես հասարակ գոյական, նշանակում է «կեսատու ուժ, կյանք» և իմաստով ու հնչյունական կազմով նույնական է «հա» ցեղանվան հետ: *Āyu* ցեղի վերաբերյալ հիմների երգիչների վերաբերմունքը նույնքան հակասական է, ինչպես *ari* բառի դեպքում էր:

Ռիգվեդայի հիմներում ավելի շատ խոսվում է *āyu*-ների և Ագնի Աստծո իարաբերության մասին.

Դու, օ Ագնի, պաշտպանություն, դու՝ Հայր մեր,

Դու արարիչ *āyu*-ների, մենք հարազատները քո: (Ռիգվեդա, I. 31.10)

Ծառայելով նրան /Ագնիին/ ջրերի կացարանում, Աստվածային քրմերը ի սկզբանե նրան դրեցին *āyu* ցեղի մեջ: (Ռիգվեդա, II. 4. 2)

Քեզ, օ Ագնի, *āyu*-ների համար առաջին *Āyu*-ին (Ռիգվեդա, I. 31.11)

Այս տողերից իմանում ենք, որ Ագնի Աստվածն է *āyu*-ների Արարիչը, սկզբնապես պաշտվել է *āyu*-ների մեջ և *āyu*-ներն Ագնիին համարում են իրենց նախահայր *Āyu*, ում անունից էլ ծագել է *āyu* ցեղանունը: Այստեղ, որպես նախնական դիտարկում, նշենք, որ վեդայական Ագնիի զուգահեռը Հայոց Վահագնն է, Շիրակացին Վահագնին է կոչում «Հայոց նախնի», Վահագնը կրել է Քաջ մակդիրը, որից ծագել են Հայաստանի Քաջանց երկիր և հայերի Քաջեան, Քաջք ինքնանվանումը: «Քաջ» և «արի» բառերը հայերենի համանիշերն են:

arya – Ըստ Ժ. Դյումեզիլի, «սկզբում, նախապատմական շրջանում, *ari* ընդարձակ հանրության անդամն է» կամ «*ari*-ին բնորոշ իրավունքներ ու հատկանիշներ ունեցող մարդն անվանվեց *arya*»: Այսինքն, *arya*-ն *ari* հասկացության մեջ ամփոփված գաղափարների կրողն է: Ժ. Դյումեզիլի մեկնաբանությունն *arya* բառի ընդհանրական նկարագիր է և չի բացահայտում բառի իմաստը: Ռիգվեդայի թարգմանիչների շրջանում տարածված է Պ. Թիմեյի այն մեկնաբանությունը, թե *arya* նշանակում է «օտարի պահապան» (օտար–*ari*), երբ խոսքը վերաբերում է աստվածներին և «հյուրընկալ», երբ խոսքը վերաբերում է մահկանացուներին:

Այնհայտ է, որ *arya* բառի այս իմաստները են քաղվել են հիմների Էնդիոնալ դաշտից և այս բառի բուն իմաստը ևս անհայտ է:

ārya – Սա նախորդի ածանցյալ ձևն է և հենց այս բառն է օգտագործվում որպես արիական ցեղերի ինքնանվանում: Բառի-*ya* բաղադրիչը ծագում, սերում ցույց տվող ածանց է (օրինակ՝ *Āditya* նշանակում է *Āditi*-ից սերվածներ, ծնվածներ): Այսինքն, *ārya* բառը տառացի նշանակում է *ar*-ից սերված, ծնված արորդի:

Պ. Թիմեն *ārya* բառի համար առաջարկել է «տանտեր» թարգմանություն: Սա ևս հիմների ենթատեքստից գուշակված թարգմանություն է և արտահայտում է *ārya*=արորդի բառի մասնավոր նշանակությունը. տանտերներ են դառնում տունը կառուցողի որդիները, ժառանգները: Պ. Թիմենի թարգմանությունն արտահայտում է այս իմաստը, սակայն բաց է թողնվում ժառանգների նախնու և տունը կառուցողի բնութագիրը (*ar*=ար):

Այս փաստերը վկայում են, որ հնդիկները վաղուց մոռացել էին *ari*, *ārya* բառերի նախնական իմաստները: Մոռացել էին, որ այդ բառերով տրվել են ցեղի և նրա հոգևոր, մշակութային, տնտեսական համակարգի ընդհանրական բնութագիրը:

Յնդկական էպիկական գրականության (Ռամայանա, Մահաբհարատա) մեջ թեև *ārya* բառը շարունակվում է գործածվել որպես ընդհանրական էթնիկ պատկանելիության բնութագիր, սակայն հիմնականում գործածվել է որպես անհատի արժանիքների բնութագիր «արժանավոր, ազնիվ, առաքինի» իմաստով: Բուդդիստական գրականության մեջ (Ք. ա. VI դ հետ) *ārya* բառն ավելի հաճախ է գործածվում, քան վեդայական գրականության մեջ, սակայն արդեն լիովին դուրս էր մղվել բառի նախնական նշանակությունը և նրան արդեն վերագրվում էր «սուրբ, ազնիվ» իմաստ և գործածվում էր որպես կրոնական տերմին: Բուդդայի ուսմունքը անվանվում էր *ārya dharma* = «սուրբ օրենք»:

իրան – Իրանական լեզուներում կան *arya* և *ārya* ձևերը, սակայն բացակայում է նախնական *ari*-ն: Իսկ դա նշանակում է, որ իրանական լեզուների կրողները մասնակից չեն եղել *ari*-ական հանրության ու աշխարհայացքի ձևավորման նախնական փուլին: Իրանացիները փոխառությամբ յուրացնելով *ari*-ականության հիմունքները, տվել

են իրենց մեկնաբանությունները և հարմարեցրել իրենց հոգևոր ու աշխարհիկ արժեքակերպին: Օրինակ, իրանացիները արիացի են համարել նրանց, ովքեր պաշտել են արու աստվածների: Նման մեկնաբանության հիմքում անշուշտ դրվել է զրադաշտական դիցաբանի առանձնահատկությունը (Անուրամագոն ու նրա արարած վեց ոգեղեն արական էությունները (aməša-spənta)):

Իրանալեզու ցեղերը Իրանական սարահարթի արևմտյան մասերում (Ջագրոսի լեռներ և հարակից տարածքներ) հայտնվում են միայն Ք.ա. ~VIII դարում, իսկ զրադաշտական ուսմունքը ծագել է Ք.ա. VI դարի կեսերին:

Արիական գաղափարները, արիական կոչվելու պատվաբեր տիտղոսը և arya բառը իրանական միջավայրում տարածվում են զրադաշտական ուսմունքի միջոցով:

Նախապես դրանց մեկնաբանությունները հարմարեցվել են զրադաշտական ուսմունքի դրույթներին: Հետագոտողներից շատերն են հետևում այն տեսակետին, որ զրադաշտական ուսմունքի հեղինակ համարվող Ջրադաշտը ծագումով Հայաստանից էր:

Arya բառից է բխեցվում Պարսկաստանի Իրան անվանումը: Սասանյան Պարսկաստանի տիրակալները կրում էին շահնշահ Երան և Անեթան = «արքայից արքա արիների և անարիների»:

Արյունընում տեսնում ենք, որ արիական աշխարհը բնութագրող *ari*, *arya* և *arya* բառերը վեղայական և իրանական լեզուներում չեն ստուգաբանվում, որպես էթնիկ բնութագրի տերմիններ, ներմուծվել են դրսից և ինչ որ ժամանակ անց կամ մոռացվել են այդ բառերի ծագումն ու իրական իմաստները, կամ ներմուծելուց հետո դրանց տրվել են նոր իմաստներ և դարձվել տվյալ հասարակության կամ անհատի բնութագրիչ կաղապարներ:

Հնդեվրոպական համարվող ժառանգ լեզուներից ոչ մեկում *ari*, *arya* և *arya* բառերը գոյություն չունեն: Այս փաստերն արդեն բավարար են, որպեսզի վստահաբար պնդենք, որ

ա. արիականությունը համահնդեվրոպական տարածում չի ունեցել և արիականությունը չի ծագել հնդեվրոպական լեզվական միջավայրում,

բ. հնդեվրոպական ցեղերի բնակության վայրերից դուրս եղել է արիականության ծագման ու ձևավորման մի նախնական օջախ, որտեղից էլ գաղափարներն ու համապատասխան տերմիններն անցել են հնդկական ու իրանական ցեղերին:

Այս պնդումները հիմնավորվում են արիականության միակ իրական ու աջաջնային օջախը որոշելու նպատակով պիտի անցնենք Հայաստան:

Հայաստան – Հայերենի բռնի հնդեվրոպականացումը նույնքան փաստ հասցրեց Հայոց ինքնությանը, մշակույթին ու պատմությանը, որքան Հայաստանի բռնի քրիստոնեացումը: Հայաստանի քրիստոնեացումը (III դ վերջ – IV դ սկիզբ) հայ ազգին զրկեց նախաքրիստոնեական շրջանի բազմազան արժանատի ազգային մշակույթից, գրից, ազգային կրոնից, տաճարներից, շատ ու շատ ազգային տոներից ու ավանդույթներից, դարձավ մեծ արտագաղթի պատճառ...

Հայաստանի բռնի քրիստոնեացման ընթացքում կատարված ավերածությունները իրական, ֆիզիկական էին: Հայերենի բռնի հնդեվրոպականացումը թեև թղթի վրա է, ընդամենը լեզվաբանական տեսություն է, սակայն պատմագիտության մեջ տիրապետող դիրք ստացած հնդեվրոպաբանությունը դրա միջոցով հայ ազգին զրկում է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. VI դարից առաջ ստեղծված մշակույթի հեղինակը համարվելու իրավունքից:

Հայկական հնդեվրոպականների այն պնդումներին, թե իբրեւ հայերը, գաղթելով Եվրոպայում գտնվող նախահայրենիքից, Ք.ա. ~VI դ են տարածվել Հայկական լեռնաշխարհում, հնագիտական նյութը (սկսած վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերներից) և սեպագիր աղբյուրները (սկսած Ք.ա. ~IV հազարամյակի շումերական նշանագիր և սեպագիր աղբյուրներից), հաստատում են, որ հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են:

Այն ինչ հազարամյակներ առաջ արել էին իրանական և հնդկական ցեղերը (արիական ռասա լինելու գաղափարի ներմուծում և տեղայնացում), նույնը Եվրոպայում սկսեց արվել XIX դ առաջին կեսում: «Արիական ռասա» հասկացությունը զուգահեռ և նրա հիման վրա ծնվեց մի այլ տեղայնացված «նորդական ռասա» հասկացությունը:

Եվրոպայում ընթացող այդ պրոցեսների ֆոնի վրա լեզվաբանները հայերենը համարում էին իրանական լեզվախմբին պատկանող լեզու: Միայն XIX դ վերջում, հիմնականում գերմանական լեզվաբանական դպրոցի ջանքերով, հայերենը դարձվեց հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ: Ընդ որում, եթե մյուս հնդեվրոպական լեզուների միջև բառային ընդհանրությունների աստիճանը 70%-ից ավելի է, ապա հայերեն բառարմատների միայն մի քանի տոկոսն ունի հստակ զուգահեռներ հնդեվրոպական լեզուներում: Գրեթե նույնքան, իսկ որոշ դեպքերում ավելին է հայերենի բառային զուգահեռների քանակը սեմական, կովկասյան, թուրք-մոնղոլական

լեզուների հետ:

Առաջավոր Ասիայում հնագիտական խոշոր հայտնագործությունների և զրոյալ պատմա-լեզվաբանական տեսությունների ստեղծման այդ ժամանակաշրջանում աշխարհը գործնականում ոչինչ չգիտեր հայ ազգի ու նրա մշակույթի մասին:

Իրենք իրենց ու իրենց փառավոր անցյալի մասին ավելի քիչ բան գիտեին Քրիստոսի ողորմածությանն ապավինած հայերը: Աշխարհը նրանց ճակատագրին, լեզվին ու պատմությանը վերաբերվում էր ըստ իր հայեցողության, ըստ իր շահի:

Մնալով արիականության թեմայի մեջ, տեսնենք, թե աշխարհն ինչ պիտի իմանար Հայոց մասին, որ չգիտեր և ինչ պիտի իմանար հայությունն իր մասին, որ մոռացել էր:

*
*

